Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

I № 10

ԾԱՂԿԱՔԱՂ

ՀԱՏՈՒԱԾՔ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ՀՆՈՐՀԱԼԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

)(1861)(

Լեռ
√1825

43944-4-h-
72/8
1/78

ՀԱՏՈՒԱԾ Փ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

1999

ՑԵՂԵԱԼ ՑԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒԵԼՈՅ

- 5 ՅՈՒՆԻ 1898
Центр. Ереван
Арх. Ереван
ԷՋԱՆԱԳԻՏ
30 ՅՈՒՆԻ 1900
ԴՐԱԴԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
28003-62 Q

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՕՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1861 —

Ef. 1831

1825-40

1898

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արդէն բանասիրաց շատերուն ծանօթ է, Կաթուղիկոսաց թուղթերուն մեկնութիւնները, որ գրած է Սարգիս Շնորհալի մեծանուն վարդապետը*։ Բայց յաւելք սրտի տեսնելով, որ ընդհանրութիւնը՝ ինչպէս նախնեաց ուրիշ մատենագրութիւններուն՝ նոյնպէս ասոր վրայէն ալ գաղափար մը չունի, ուստի այս երեւելի հեղինակութեան՝ առայժմ միայն Յակոբայ առաքելոյ թղթոցը մեկնութիւններէն** մեկ քանի հատուածներ աշխարհաբառ լեզուով հրատարակելով՝ փափաքեցայ փոքր Ճաշակ մը տալ սիրելի ընդհանրութեան Ազգիս, վասահ ըլլալով նոցա բարեպաշտութեանը որ ներողամտութեամբ կ'ընդունին այս դոյզն յօժարութիւնս։

Հարկ է այս տեղ ծանուցանել, որ այս հրատարակութեան մէջ ամենուին քնագրէն խոտորիլ չուզելով՝ թէ՛ ոճը և թէ՛ շատ բառերու նշանակութիւնը, որոնք որ բաւական կը հասկրվին՝ ճիշդը պահած, և միայն մութ երեւցած տեղերը փոքր ինչ բացատրված է, միանգամայն շափազանց զգուշանալով խմաստին խանգարմանէն, և այն հատուածները որք աւանց խօսքին կարգը շփոթելու կնոյին դուրս ձգվիլ համառօտութեան համար, անոնց տեղերն ալ կէտերով որոշված, ու նաև Ս. Գրոց մէջէն բերված խօսքերուն տեղն ու գլխաւորմանն ալ բան կարի նշանակված է, որպէս զի ուզողը գիւրաւ գտնոյ տեղը։

---

* Այս մեծանուն վարդապետը՝ Նէրսէս Շնորհալի Հայրապետին ժամանակակից՝ միանգամայն և աշակերտակիցն էր։

** Եթէ դիւրութիւն մ'ըլլայ՝ մնաւոր Կաթուղիկոսաց միւս թղթոցը մեկնութիւններուն ալ մեկ քանի հատուածները ապուի հրատարակվի։

Կը յուսամ արդեն բանագիտաց ազնուամտութենէն, որ խիստ դատաստան չեն ըներ եթէ պակասութիւն մ՚ալ գտնը-ին, յիշելով որ այս տեսակ գրութիւններու յարգը մի միայն գեղեցիկ դարձուածքներու և ոճերու վրայ չկայանար, այլ պարզութեան։ Այսու ամենայնիւ գուցէ գտնըվին ոմանք որ այսպիսի հրատարակութեան մը հարկ չտեսնեն, ուստի այս տեսակ հրատարակութենց թէ պէտքը և թէ ուղղակի օրինն վերաբերիլը ապացուցանելու համար, աւելորդ չեմ համարիր սոյն հեղինակին իւր յառաջաբանութեան մէկ հատուածը մէջ բերելու, որ կ՚ըսէ։

«Եւ արդ՝ ես աղօթքով զասի կը խնդրեմ Աստուծմէ, որ
» եկեղեցւոյ ամենայն որդիները (պաշտօնեայները), այսպիսի
» գործերու (Ս. Գրոց հմտութեան) մէջ պարապին և սանոյ մէջ
» դեգերին, և իրենց վայելչութեան և պարծանաց պատկ հա-
» մարին տարիւոյ. այլ զի զատնք չեմ տեսներ, ուստի Նոյին
» աղաւաւ կ՚արտասուեմ. զի կը տեսնեմ շատերը մէկմէկ կողմ
» ցրուած ու միութենէ բաժնըված, և իրենց կեանքը պա-
» տարկութեան փոխած, անճաշակ գտնուելով այսպիսի երկ-
» նային բարիքներէն (Ս. գիրքերէն). զի որ մէկը վաճառա-
» շահութիւնը կը սիրէ, որ մէկը այգեգործութիւնը, և մէկ
» ուրիշը կարուսիչ արծաթասիրութիւնը . . . . . .
» իսկ մէկ ուրիշ մ՚ալ քաւնն ու դատարկութիւնը՝ որ է մայր
» թշուառութեան և վնասակար առ ամենայն գործ։ Եւ այս-
» պիսիները ոչ միայն զուրկ կը գտնըվին Ս. Գրոց գիտութե-
» նէն՝ այլ և ուրիշ ասոր պարապողներուն ալ խիստ դատա-
» ւոր, և անմոց բաւերուն ու խօսքերուն ալ քննիչ կ՚ելլան,
» ոչ թէ օգուտը նայելով՝ այլ խօսքերուն կարգը դիտելով»։

Վերջապէս՝ բաղձալի է որ աւելի ճարտար գրիչներ նախ-
նեաց մատենագրութիւններէն գտնէ այն կտորները, որոնց շատ
պէտք ունինք նեղիայիս մէջ, աշխարհաբառ լեզուով հրատա-
բակեն, յոգուտ ընդհանուր ազգայնոց և ի փառս Աստուծոյ։

Ե. Մ. Տ.

ԷՄ ՆԱԳԻՆ
30 ՍԵՊՏ. 1900
ԳՈՒՌԻՍԱՆ ԹԻՓԼԻՍՈՒՄ

«Ոչ թե ստանալը՝ ոսկիէն ու պատուական ակուանքներէն, և իմ արդիւնքս ոսկիէն ու ընտիր արծաթէն լաւ է»։ (Առակ. Ը. 19)

«Ով միամիտներ, խորագիտութիւն սովրեցէք, ով անխրատներ, դրէք ձեր սրտին մէջ։ Լսեցէք ինձ, զի պարկեշտ բաներ կը բարբառիմ, և իմ շրթունքներէս ուղղութիւն կը բղխեմ»։ (Անդ Ը. 5–6)

«Երանեալ է այն մարդը՝ որ կը լսէ ինձ, և իմ ճամբայներս կը պահէ»։ (Անդ Ը. 34)

ՔԱԴՈՒԱԾ

ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Գրադարան Գ. Գ. Գ. 1894 Գ. Գ. Գ.

խոնարհութիւնը վրայ, այլ անզուգական բարձրութիւնը, որ Աստուծմէ է. 'վասն զի «Երանելիք են, կ'ըսէ, հոգւով խոնարհները»։ (Մար. Ե. 3։ Ղ–կ. Զ. 20). և «որ կը խոնարհեցնէ իւր անձը՝ պիտի բարձրանայ» (Մաթ. ԻԳ. 12). և ուրիշ տեղ մ'ալ՝ թէ «խոնարհներուն շնորհք կուտայ» (Առակ. Գ. 34)։

Ուրեմն՝ այսպիսի բարձրութեան մէջ, կ'ըսէ, թող պարծի այն որ խոնարհութեան մէջ է։

«Բ– այն որ մեծապոռն է, թող պարծի ի–ր խոնարհութիւնը վերայ» (Կորն. Յակ. Ա. 10)։

Կը տեսնենք Հոգւոյն շնորհաց անճառ իմաստները, թէ զիարդ և որպիսի զանազան կերպարանօք կը խրատէ զմարդիկ՝ աշակերտվիլ ճշմարտութեանը, ըստ երեսացն՝ ըստ հասակին, և ըստ պատուոյն։

Որոնք որ այս երեւելի կեանքիս մէջ խոնարհ են՝ կը ցուցնէ անոնց այն անտեսանելի բարձրութիւնը որ առ ՅԱստուծոյ. իսկ որոնք որ մարմնականին մէջ յօրացած են մեծութեամբ և ընչից արդասաւորութեամբ, անոնց ալ յառաջ կը բերէ զխոնարհութիւնը 'ի կարգ պարծանաց, զԱստուած օրինակ կացուցանելով անոնց։

Օ՛ի թէպէտ և մեծատուն մէկն ես, կ'ըսէ, սակայն ոչ իբրև զԱստուած՝ և ոչ ալ ընչաւէտ Անոր պէս, որուն իրենն են ամենայն երեւելի և անտեսանելի ստացուածքները, բայց սակայն կտաւ ոտա–

ծաւ՝ և իւր աշակերտաց հողեղէն ծունկներուն խոնարհեցաւ և ծառայաբար լուաց նոցա ոտքը։

Լ։ այն որ Աստուած էր, սակայն պարծելով կ'ըսէր թէ «ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ»։ (Մաթ. Ի. 28։ Մար. Ժ. 45։ Ղուկ. ԻԲ. 27)։

Լ։ արդ ահա ոմ մեծատունք, թերեւս պատկառելի կը համարիք այս նախադիծ օրինակը. վասն զի դու թէպէտև խոնարհիս, իբրեւ մարդ՝ մարդուկը խոնարհիս, քու նմանիդ ու պատկերակցիդ. զի անկից աւելի ոչինչ ունիս յարարչութենէ անտի Աստուծոյ, ինչու որ Ստեղծող Բարին՝ զամենքն ալ համապատիւ կ'ստեղծէ։

Լ։ ինչ որ միանգամ յանիրաւութենէ և 'ի զրկանաց ստացած ես՝ ատենցմով պարծիլ պէտք չէ. և «ինչ ունիս դուն որ չես առած, և եթէ առիր՝ ինչու՞ կը պարծիս չառածի պէս» կ'ըսէ առաքեալը. (Ա. Կորն. Դ. 7). և ուրիշ տեղ մը թէ՝ «թող չի պարծի իմաստունը՝ իւր իմաստութեամբը, և մի՛ հզօրը՝ իւր զօրութեամբը, և մի՛ մեծատունը՝ իւր մեծութեամբը։ Այլ որ պարծի՝ անով թող պարծի, իմանալ և ճանաչել Տէրը, և արդարութիւն ու իրաւունք ընել երկրի մէջ։ (Ա. Թագ. Բ. 9)։

Լ։ Տէրոջը տիրապէս ծառայութիւն և ծանօթութիւնը՝ խոնարհութիւնն է, որ մանաւանդ թէ Անոր պատկերին տիպը և Անոր փառացը կերպարանքն է. նմին իրի և հոս՝ սա ալ զատնք կը խրատէ՝ ըսելով «Թող պարծի մեծապո՝նը իւր խոնարհո՝ութեանը վերայ»։

Վասն զի չկայ ուրիշ պատիւ մը որով այնչափ մեծարգի տեսնուի մեծատու

, քան թէ խոնարհութիւնը։ Զի եթէ թագ կամ ծիրանի՝ կամ մարգարտով ընդելուզեալ ոսկեհուռն հանդերձներն ըսես, սակայն ատոնք բան մը չեն՝ հանգոյն այն մեծութեանն ու շքեղութեանը, երբոր Քրիստոսի կերպարանքն զգեցեալ ունենայ։

Այսպէս այնպիսին ոչ միայն պարծանաց արժանաւոր է, այլև մեծի երանութեան ու բիւրապատիկ պսակաց. և որպէս զի չըլլայ երբէք որ մեծատունները զասոնք լսելով՝ դժուարանան խոնարհութեան անուանը, ասոր համար յաջորդ խօսքերով կ'սկըսի յանդիմանել այնպիսիները՝ որք կը հպարտանան մեծի փառքով ու ծաղկընկէց (ծաղկի պէս թափուող) մեծութեամբ. անոր համար կ'ըսէ. "Քանզի անիկայ խոտի ծաղկի մը պէս վաղվաղիկ պիտի անցնի" (կաթ. Յակ. Ա. 10)։

"Զի կը ծագի արեւը խորշակով հանդերձ՝ ու կը յամենեցնէ խոտը. և կը թափի անոր ծաղիկը, և կը կորնչի անոր գեղեցկութեան վայելչութիւնը"։ (Անդ Ա. 11)։

Զի զորօրինակ խոտը վայելուչ և կանաչագեղ է, կ'ըսէ, գարնանային ժամանակին, և մանաւանդ երբոր ծաղկանց պայծառութեան վայելչութիւնը իրեն հետ կապված կ'ունենայ, ցանկալի և վայելուչ կ'երեւի տեսողաց՝ և իւր երփնագեղ գունաւորութեամբը ամենեցուն աչքը իրեն կը դարձնէ. իսկ ա-

բեգական խորշակով մէկտեղ ծաղած ատենը՝ խոտը կը ցամքի՝ և ծաղիկը վաղվաղակի կ'ինայ, և իւր գեղջն վայելչութիւնը կը կորնչի՝ նմանապէս, կ'ըսէ, «ԵՒ մեծապոռնը ի-ր ջահերով մեկտեղ պիտի խառամի» (Աղ Ա. 11)։

Վասն զի մարդկան անցաւոր փառքը ոչինչ աւելի է քան խոտոյ ծաղիկը, և մահու փորձութիւնները ևս առաւել սաստիկ են քան թէ արեգական տապը. և մարդս ալ դեռ փառքի մէջ չբողբոջած՝ և դեռ հեշտալեաց զգացումը չառած, վաղվաղակի կը խամրի ու կ'ապականի։

. . . . . .

Լաւ արդ՝ ա՛ղէ, ըսէ, ի՞նչ կայ այնչափ դիւրաթառամ և դիւրաթլասելի՝ քան թէ մարդս, թէ և մեծատուն մը կամ թագաւոր մը ըլլայ։ Այսօր յօրացած կը հպարտանայ ու կը մեծաբանէ՝ իբրև տէր կենաց և մահու, և պայծառ հանդերձներով ու ոսկեզօծ գօտիովը փքացած կ'ամբարտաւանի, և 'ի վաղիւ ընկած ու մեռած և որդերու մէջ համակեալ կը գտնըվի, և նորա ամենայն փառքը և վայելչութիւնը խոտոյ ծաղկին պէս սրագագոյն կը թառամին ու կը կորնչին։ Ասոր համար նմանագոյն օրինակը մեր առջին դրաւ. «զի ծաղիկ խոտոյ» ըսաւ, և ո՛չ թէ «ծառոյ». վասն զի ծառի ծաղիկը թէպէտ և կը թարշամի ու կ'ապականի, սակայն ծառը կը կենայ ու կը մնայ և չանցնիր. իսկ խոտը իւր ծաղիկին հետ միասին երկուքն ալ 'ի միում վայրկենի կ'անցնին. նմանապէս և ամենայն մարդ։

. . . . . .

այս միտքով ըսաւ թէ, «Մեծապոռնը իւր շահերովը մեկնեալ պիտի նաւատի»։

ՅՈՐԴՈՐԱԿ

Յ։ արդ մեք զասունք տիրապէս գիտնալով, չը զարմանանք ծաղկընկէց փառքերու վրայ՝ և երանութիւն չտանք մեծատուններուն. վասն զի ոչ միայն ծաղկի խոտէն աւելի դիւրաթառամ են անոնց փառքերը, այլև սարդի ոստայնէն ևս անարդագոյն . . . ։

. . . . . .

Յ։ արդ՝ հարցնենք անոնց, թէ ինչո՞ւ համար այդչափ կը կատղիք շահերնուդ ցանկութեանցը մէջ. 'ի զուր աշխատելով և ընդունայն խռովելով՝ գիշեր ու ցորեկ կ'աշխատիք աղքատները զրկելու, նեղելու, կեղեքելու և տառապեցնելու. որբերը և այրիները կը լացնես, և չգիտես՝ որո՞ւ կը ժողվես։ (Ղ-ի. ԺԲ. 20)։

Յ։ արդ՝ ի՞նչ ունիք ըսելու և կամ ո՞ր իրաւացի պատասխանը առաջ բերելու. եթէ ըսես որ՝ ես միայն ինքզինքիս համար կը ժողվեմ՝ որպէս զի կեանքիս մէջ հանգստութիւն վայելեմ, և մարդոց մէջ ճոխ ու փառաւոր ըլլամ. բայց ահա այդ ըսելովդ անմիտ և անզգամ կը գտնըվիս . . . . . ։

. . . . . .

Ո՛վ մեծատուն, կուզես, հանգիստ ու փառաւոր կեանք վայելել, 'ի բաց կեցիր այն անիրաւութիւններէն ու զրկանքներէն, և դողումն չմերձե-

նար քեզի, և հակառակ բան մը քեզ չտագնապեր։
. . . . . .

Լու միայն ինքզինքին համար հարստութիւն ժողովելն ու պահելը ի՞նչ է, եթէ ոչ՝ ագահութիւն, որ է՝ երկրորդ կռապաշտութիւն. (Կող». Գ. 5) . . .
. . . . . .

Իսկ որք իրենց զաւակացը համար ժողովելենն կ'ըսեն, ու ասիկայ բարեդէպ պատճառ մը կը համարին, սակայն և այս ալ խաբէութիւն՝ և բանսարկուին թելադրութիւնն է, որ չկրնալով յայտնապէս կռապաշտութեամբ խաբել. . . զաւակներնուն պատճառով կ'արուեստակէ նոյնը ընել, և ասով՝ նաև 'ի Քրիստոսէ ևս անյոյս կ'ընէ. ով յիմար, ո՞չ ապաքէն այն Աստուածը որ զքեզ ստեղծեց՝ քու որդիդ ալ Այն ստեղծեց, և Այն որ տուաւ քեզի այդ մեծութիւնը՝ ինչո՞ւ չպիտի տայ քու որդւոյդ ալ։

Արդեօք քեզի անկէց առաւո՞ լ կը սիրէ. և քեզի Տուողը՝ անկէց պիտի արդիլէ՞ . . . . . .

Նորա ստեղծածն է քու որդիդ, Իրեն ապաստան ըրէ զանիկայ. և դուն՝ վայելչական առաքինութիւնը ուսցո՛ւր անոր՝ Աստուծոյ պատուիրանքները կատարելով, ագահութեամբ ժողովածները ափռել և տալ աղքատաց, որոյ արդարութիւնը կը կենայ ու կը մնայ յաւիտեան։ (Սաղ. ՃԺԱ. 9)։

Արդ եթէ տիրապէս Աստուծմէ առիր այդ մեծութիւնը՝ և ունիս, վատահ եղիր և հաւատա թէ քու որդւոյդ ալ կրկին կու տայ առատութեամբ՝ եթէ դու կամիս։

Եւ ի՞նչպէս կ՚ըլլայ, կ՚ըսես, իմ կամքս. այս-պէս, թէ ի՞նչ որ Աստուծմէ պարգև առեր ես՝ և ունիս, դարձեալ Աստուծոյ պարգևես և տաս. ձգէ՛ որդւոյդ քու բարեպաշտութեանդ օրինակը՝ և մի՛ ընչից բաղմութիւնը (միայն). ձգէ՛ անոր վերակացու՝ Աստուծոյ անեղբական դթութիւնը՝ աղքատաց երա-մոյն ողորմութիւն ընելովդ, և ո՛չ թէ (միայն) ոսկւոյն պայծառութիւնը. սովրեցո՛ւր անոր ողորմածութեան բարիքները (Սաղ. Ե. 7), և մի՛ տմարդութեան չարիքը. ուսցուր անոր զԱստուած պաշտել, և չէ թէ մամոնայն. սովրեցո՛ւր անոր երկնաւորաց ցան-կալ, և մի՛ երկրաւորաց. վարդապետէ՛ անոր պատ-ուասէր ըլլալ վերին (երկնային) պատուոյն, և ո՛չ թէ ունայն կենցաղոյս ծաղրելնկէց փոքրին. սովրե-ցուր անոր սիրել ո՛չ թէ այս առօրեայ՝ անցաւոր և համայն թշուառութեամբ լցեալ կեանքը, այլ՝ կա-յուն, մնայուն և բիւրապատիկ հանդստութեամբ լցեալը։

Իսկ թէ որ յանիրաւութենէ և 'ի զրկանաց ու-նիս ընչից բաղմութիւնը՝ զոր հանդերձեալ ես թող-ցուլ քու որդւոյդ, 'ի միտ առ և հաւատա՛, թէ ո՛ւր որ անիրաւութիւն ու զրկանք է՝ անդ է և Աստուծոյ բարկութիւնը։

Ապա ինչո՞ւ համար նախ և առաջ Աստուծոյ բարկութեան պատճառները չես լուծաներ ողորմու-թիւն սփռելով ու տալով, այլ Նորին բարկութեան կցորդ և բաժանորդ կը կացուցանես քու որդիդ ալ։

Եւ այս ահա ատելութեան նշան է՝ և ոչ սիրոյ,

զի քու որդիդ փոխանորդ կը կացուցանես քու չար գործոցդ, մանաւանդ թէ նախանձաւոր իսկ, իւր քու վրայ տեսած անիրաւութեանց ու զրկանաց հետեւելու . . . . . :

Օ՛յ եթէ դուն առանց օրինակի ու վարդապետի այդչափ չարիքներու յանդգնեցար, իսկ քու որդիդ՝ այդչափ անօրէնութեանց օրինակ և ուսուցիչ ունենալով զքեզ, ո՞րպիսի չարիքներու չպիտի մտաբերէ՝ անիրաւութիւնը իբրեւ արդարութիւն քեզմէ ուսնելովը :

. . . . . .

Եւ արդ, ո՛վ մեծատունք, զասոնք լսելով զըղջացէք ձեր սրտին մէջ, և շահեցէք ձեր անձն ու ձեր որդիքը, և մի՛ ըլլաք պատճառ կորստեան ձեզի և անոնց, երկնչելով Աստուծոյ դատաստաններէն. « ողորմութիւն տուէք, կ՚ըսէ, և ահա ամենայն ինչ սուրբ է ձեր »: (Ղուկ. ԺԱ. 41):

Ստացէք, ասսի մեծութեամբ անսի մեծութիւնը. (Ա. Տիմ. Զ. 17). ոչ թէ վայրապար տուաւ քեզի Աստուած այդ մեծութիւնը և կացոյց զքեզ մատակարար և վերակացու Իւր ընչիցը՝ որ զանոնք անարժան տեղը վատնես ու անոնց միջոցով մեղք գործես, այլ՝ որպէս զի ասոնցմով անճառ բարիքները ժառանգես, (Իւր կամացը համեմատ գործածելով զասոնք):

Որոնց թող ըլլայ մեզի հասանել՝ շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի . . . . . :

ՔԱՂՈՒԱԾ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԺԱՄԻՆ

«Լրիւ մեկը կամի կրօնաւոր ըլլալ, և իւր կեղծն չի առնչուիարիւ, այլ իւր սիրտը զբաղեցնէ. այնպիսոյն վայրապար է կրօնաւորութիւնը»։ (Կար. Յակ. Ա. 26)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Լամենայն առաքինութեանց մէջ՝ պէտք է մեզի՝ կամք, և առաջին կամք. վասն զի տէր չունի առաքինութիւնը և բռնի չի կատարիր, ուստի Աստուած ալ հարկիւ չպահանջիր մեզմէ զանիկայ, ու չկամիր բռնադատելով իրեն ծառայեցնել զոք. նմին իրի գեհենն սպառնացաւ և արքայութիւն խոստացաւ, և լսողին կամացը յանձնեց ասոնցմէ որն որ ուզէ ընտրել իրեն բարին՝ իրեն անձնիշխանութեամբը։

Ինչոր համար հոս՝ կամքը յառաջ կը դնէ, «Եթէ ոչ կամի կրօնաւոր ըլլալ» ըսելով. իսկ Տէրն մեր կ'ըսէ, «եթէ ոք կամի, իմ ետևէս գալ»։ (Մատ. ԺԶ. 24։ Մար. Ը. 34 Դ.-ի. Թ. 23)։

Չեմ բռնադատեր, կ'ըսէ, և մէջ հարկադրելով կը կոչեմ զոք, այլ բարեբանչիւր մարդու իւր կամացը կը ձգեմ. ով որ կը կամի, կ'ըսէ, թէ՛ այր, թէ՛ կին, թէ՛ հրեայ, թէ՛ հեթանոս, թէ՛ տէր, և թէ՛ ծառայ, չեմ մերժեր 'ի բաց, այլ միայն կամքը կը խնդրեմ։

Նմանապէս և հոս աղ զոյս կը պահանջէ. «ԷՐԷ ոչ կամի, ի՛ՐԱՏ, կրօնաւոր ԸՆԱԼ»։

Կրօնաւորութիւնը ժուժկալութիւն կ'անուանի գրոց մէջ. և ժուժկալութիւնը ինքն ըստ ինքեան աստանձինն կրօրի պիտանի չէ, եթէ զինքը զարդարող ուրիշ առաքինութիւնները իւր հետ չունենայ։

Վասն զի ծառը յայնժամ վայելուչ կ'երևայ՝ երբոր ընտիր պտուղը իւր հետ ունենայ. իսկ թէ որ անմասն ըլլայ պտուղէն՝ ունայն է և անպիտան։

Այսպէս և կրօնաւորութիւնը . . . . . .։

Զոյց նախ և առաջ տեսնենք թէ ի՞նչ է կրօնաւորութիւնը, և ուստի՞ կը գոյանայ, և ո՞րպիսի բանէ ընկալաւ այս անունը։*

Կրօնաւորութիւն է առանձնանալ յաշխարհէ՝ և անզբաղ կեանք ստանալ, և ժուժկալութեամբ տընօրինել իւր կեանքը, թէ՝ կերակրոյ և թէ ըմպելեաց մասին . . . . . հա այս ամենը կրկնուն է կրօնաւոր։

Իսկ կուսաբնակաբար կը գոյանայ նա՝ ի լծոյն Քրիստոսի՝ և՝ ի պատուիրանացն բնութեանց. զի խոնարհութեամբ՝ իւր ուսը լծոյն ներքեւ գրած իւր թիկանցը վերայ կը կրէ զանի. ոչ առ նեղելով սրտի, ոչ՝ ի հարկէ, ոչ վասն երկիւղի և ոչ վարձուց ակնուանելով,

---

* Կրօնաւոր բառը [illegible] ոչ՝ ոչ՝ կը նշանակէ ժուժկալ, համբերող, [illegible] մեռոք՝ առաքելոյն խրատները առ [illegible] ամեն քրիստոնեայ կենան վերաբերիլ. թայց ընդհանրապէս [illegible] տեղ իրեն գոյանն կը գործածվի և կը նշանակէ միայնակեաց, վանական, եռայն. ինչպէս Սար-

Մ. ՍՅՈՒՆԻ

այլ՝ ի սիրոյ. այս է ծայրագոյն կրօնաւորութիւնը։

Իսկ անունը ընկալաւ ի սեռն և ի սուրբ հաւատոց. զի ամենայն ուրեք սուրբ գրոց մէջ՝ հաւատքը կրօն կ'անուանի. և զի այսքան առաքինութեանց ժուժկալութիւնը՝ հաւատով կը կրեն մարդիկ։

Իսկ կամ՝ յատուկ կրօնաւորութիւն կ'անուանէ զկուսութիւնը, և անախտ ու անզբաղ կեանքը. «Զի որ կոյսն է՝ Տէրոջը բաները կը հոգայ, թէ ինչպէս հաճոյ ըլլայ Տէրոջը»։ (Ա. Կորն. Է. 32, 34)։

. . . . . .

«Իրիկ մէկը կամ, կ'ըսէ, կրօնաւոր ըլլա՝ և ի՞նչ ընդունայնարեն, այլ՝ ի՞նչ սիրոյը զքաղցնէ, այնպիսոյն վայրապար է կրօնաւորութիւնը»։ (Կարմ. Յակ. Ա. 26)։

Ապա ուրեմն չկայ այնպիսի հէք և թշուառքան զայն մարդը՝ որ այնպիսի բարիքներէ զրկուի, որ օրուան ծանրութիւնն ու տօթը վերցնէ և ի վարձուն չվայելէ՝ այլ ևս բոլորովին տարագիր գտնըվի։

Իսկ արդ՝ տեսնենք և վճիռը որ առաջ կը բերէ. «այնպիսոյն, կ'ըսէ, վայրապար է կրօնաւորութիւնը»։ Ո՞րպիսոյն, որ կրօնաւորի արտաքին ձեւը զգեցեալ է. . . . . և իւր լեզուին վերայ սանձ չդներ, և իւր սիրտը զբաղմունքէ ազատ չպահեր, այնպիսոյն, արդարև վայրապար է կրօնաւորութիւնը։

դիս Հնարքալի ալ հոս տեղ մնանանդ Յորդորակին մէջ այս մտաբ կը վարէ։ (Այսու ամենայնիւ՝ երբեմն այնպէս մը կ'ըսէ որ գրեթէ ամէն հաւատացելոց կ'ուղղէ խօսքը. (տես՝ Երես 17, տող 19։ Երես 18, տող 2։ Երես 19, տող 19։ Երես 22, տող 3, և այլն։)

Որ անգութն է բերանը և անսանձ լեզուն, որ անիծանող է և հայհոյիչ, որ բամբասող է և տրտունջող, որ զրպարտող է և չարախօս, որ շոգմոգ է և բանսարկու, որ կատակերգակ է և ծաղրածու, որ թշնամանող է և դատարկասաց, ապա բարեաւ ըսաւ թէ՝ «այնպէս-ոյն վայրապար է կրօնաւորութիւնը»։

Հայց դարձեալ կը թուի ինձ՝ թէ զայս ըսելով զՀրէայքը կը յանդիմանէ, որոնք հաւատոյ կրօնը ընկալան և 'ի ժուժկալութեան էին ըստ օրինաց, նաև օրէնքէն ալ մեր ըստ աւետարանին Քրիստոսի, սակայն կը բամբասէին զանոնք, որոնք 'ի հեթանոսաց հաւատացեալքն էին։ (Գործ. ԺԱ. 1–3)

. . . . . .

Այս ամենայն ուրեք եկեղեցիները այսպիսի հակառակութիւններ կը կրէին անոնցմէ, որք և զբաղեալ էին օրինաց խորութիւններու, շաբաթի, զՀերու ու թլփատութեան վերայ։

Այրին աղագաւ գրեց անոնց՝ և յանդիմանեց ըսելով, «Եթէ ոչ կամի կրօնաւոր ելանել, այսինքն՝ հաւատացեալ, ժուժկալ, համբերող, և չանիյահարքի՝ եր ելը-ն 'ի բամբասանաց, այլ զբաղեցնէ եր-ը իրեարը օրինաց խորութեան մէջ, այնպէս-ոյն վայրապար է կրօնաւորութիւնը»։

Ալ՝ եթէ 'ի հրէից հաւատացեալներուն ըսելով այս խօսքը, և հետեւաբար հասարակաց օրէնք մը դրաւ՝ թող ամենեւին չզարմանայ մեկը ասոր վերայ. զի ամենայն մարգարէներն ալ Աստուծմէ առնելով պատգամները՝ Իսրայէլի ժողովուրդին խօսե-

ցան, և սակայն՝ հասարակաց օրէնք դրուեցան ա-
նոնք ամենայն մարդոց։

«Սո՛ւրբ և անարատ կրօնաւորութիւնը՝ առ Աստուծոյ
և 'ի Հօրէ, այս է որբոց և այրեաց այցելու ընաւ-
ելեանց նեղութեան ատենը»։ (Կաթ. Յակ. Ա. 27)

Երբոր յանդիմանեց այն կրօնաւորութիւնը որ
արտաքուստ նման էր բռնաւ գերեզմաններու՝ և 'ի
ներքոյ ժահահոտութեամբ լցուն, և կամ որպէս տե-
ղեւաչատ ծառ՝ զուրկ պտղոց արդասաւորութենէ.
և ցուցուց թէ չէ ինչ օգուտ անկից՝ զի վայրապար
է և 'ի չարի մասին է։

Այլ որպէս զի ընաւին անյոյս չընէ, կը դնէ
'ի կարգին այն կրօնաւորութիւնը որ Աստուծոյ է,
«կրօնաւորութիւն առ՝ սուրբ և անարատ, այսինքն՝ ամ-
նայն ներհակ կիրքերէ անխառն և ամբիծ կրօնաւո-
րութիւնն է 'ի Հօրէ լուսոյ, կ'ըսէ։

. . . . . .

. . . . «Սուրբ և անարատ կրօնաւորութիւնը՝
առ Աստուծոյ և 'ի Հօրէ, այս է, որբոց որբոց և այրե-
ացոյ այցելու ընաւելեանց նեղութեան ատենը»։

Ողորմութեան և գթոյ օրինակը դրաւ մեր առ-
ջեւ, և զի ինքն Աստուած ասոնց հաւաստիքը ամ-
նայն ուրիք կը պահանջէ մեզմէ, որպէս զի՝ մերինին
համեմատ չափէ իւր մարդասիրութիւնը։

Ըստ որում ինքն իսկ ըսաւ. «Ի՛նչ չափով որ
չափէք, անով պիտի չափվի ձեզի». (Մատ. Է. 2։

Մարկ. Դ. 24։ Ղուկ. Զ. 38) և կամ երբոր ըսաւ. «որբին դատաստանը տեսէք, և այրիին իրաւունքը պաշտպանեցէք». (Եսայ. Ա. 17). և ինչ է ապա այս գործոց տրիտուրը. «եթէ, կ'ըսէ, ձեր մեղքերը ձանձրախարիթի պէս են, ձիւնի պէս սպիտակ պիտի ընեմ, և եթէ որդան կարմիրի նման են, ասրի պէս յստակ պիտի ընեմ» (Եսայ. Ա. 18). և դարձեալ կ'ըսէ թէ, «պանդուխտը մի՛ նեղէք, և այրիին ու որբը մի՛ չարչարէք» (Եղէզ. ԻԲ. 21–22. Ղևտ. ԺԹ. 33–34)։

Ա՛յսպիսի օրինակաւ և աստ կը հրամայէ ըստ Աստուծոյ եղող կրօնաւորին. «այրիը՝ ուրբոց և այրեաց անուց նեղո-ւիան ապէնը»։

Նեղութեանց տեսակը կրկին է. կամ այն նեղութիւններն են ըսածը՝ զորոնք անիրաւներէն ու զրկողներէն կը կրեն, զորս պէտք չէ անտես առնել. և կամ զայն կ'ուզէ յայտնել թէ որբութիւնն ու այրիութիւնը առանձինն ըստ ինքեան սաստիկ նեղութիւն մի է. վասն զի ինչ կայ ողորմելու՝ քան այրի մնացողը, և կամ ինչ առաւել գթութեան արժանի՝ քան թէ հօրմէ ու մօրմէ որբացած մանկանց վիճակը։

Ուստի՝ գիտնալով Աստուած ասոնց այս տարակուսելի ողէտքը, օրէնք կը դնէ խնամարկել զանոնք և անոնց եղած շնորհքը իրեն կ'ընդունի, և պատկ ևս կը խոստանայ, և զանոնք զրկողներէն պատիժ կը պահանջէ (Եղէզ ԻԲ. 23–24). նորին աղագաւ ըսաւ. «որբոց և այրեաց այրիը՝ ուրբոց անուց նեղո-

ՐԷԱՆ ԱՊԷՆԸ »։

Ինչպէս որ էր Յոբ ժուժկալ կրօնաւորը՝ որ պարծելով կ'ըսէր, « կը փրկէի աղքատը հեզորին ձեռքէն, և օգնական չունեցող որբին կ'օգնէի։ . . . Այրիին բերանը զիս կ'օրհնէր։ Հայր էի ես տկարներուն » (Յոբ Ի Թ. 12—16)։ Ասի մարգարէն ալ կ'ըսէր Աստուծոյ համար. « որբերուն հայրն ու դատաւորն է » (Սաղ. ԿԷ. 6։ ՁԱ. 2—4։ ՃԿԵ. 9)։

Ապա ուրեմն չկայ այլ ինչ մեծ պատիւ կամ սրբութիւն կրօնաւորի մը համար, քան՝ դէպ'ի Աստուծոյ նմանութեան ելնելը՝ այցելութեամբ որբոց և այրեաց։

Եւ ոչ ալ այնպիսի անմոռութիւն և յիմարութիւն մը կրօնաւորին համար՝ քան Աստուծոյ աչքէն խնալը անկարեկցութեամբ։ Վասն զի չկայ բան մը որ այնպէս սիրելի ընէ զմարդ՝ Աստուծոյ, որպէս՝ ընկերին պիտոյքը իւր անձին վարկանելը, և ինքզինքը նոյն վիճակին մէջ համարելը, և այնպէս կարեկից ըլլալը վշտացեալին վերայ։ Նոյնպէս և ոչ որ այնպէս աստելի ընէ Աստուծոյ զմարդ, որպէս՝ ընկերին պիտոյքը տեսնել ու անտես առնելը . . . . . .

. . . . . ։

« Ինչը անարատ պահել, կ'ըսէ, աղխարհէս »։
(Կար. Յակ. Ա. 27)

Եւ կրօնաւորին կատարելութեանը բաւական չը համարելով առաջինը, այսինքն՝ որբոց և այրեաց այ-

ցելու ըլալը, այլ՝ ա՛յլ եմն կատարելութիւն կը պա-
հանջէ անոնցմէ։

Օ՛ի զորօրինակ անկնար է արձւոյն մէկ թեւով
թռչիլ ու բարձրերը վերանալ, այսպէս և անկնար է
կրօնաւորին միով առաքինութեամբ երկինք ելլելը։

Եւ որովհետև ըսաւ, «այցելու ըլալ որբոց և
այրեաց», և եցոյց թէ մեծ է պատիւը և դէպ՝ի
Աստուծոյ նմանութեանը կը տանի. բայց որպէս զի
չըլլայ որ մէկը զանիկայ ունենալուն ապաստան ըլա-
լով՝ հետեւաբար զանի արատաւոր ընէ ուրիշ պա-
կասութեանց մասին անփոյթ ըլալով, նմին իրի հոս՝
յաւելով ըսաւ. «անՅը անարատ պահել յաշխարհէս»։

. . . . . .

Եւ արդ . . . բազում արթնութիւն և արտա-
ուք պէտք է մեզ, անՅերնիս անարատ պահելո՝ աշ-
խարհէս։

Եւ անարատ ըսելը բոլորովին ամբիծ կը նշանա-
կէ, ինչպէս սրբոց համար կը վկայեն գիրքերը . .
. . . . . (Յոբ. Ա. 1։ Ղու-ի. Ա. 1)։

Օ՛ի օգուտ մը չէ՝ այդին ամենայն կողմէ ցան-
կով ամրացնել, և մէկ անկիւնէն խրամատելը. զի
այն փոքրը՝ գազաններու մնալուն և այդիին պտու-
զը ապականելուն բաւական է։

Այսպէս է և հոգւոյն ցանկը . . . . . .։

Որ թէև մէկ թիւր խօսք մը կամ խորհուրդ մի ալ
ըլլայ, բաւական է արատաւոր ընել զՀոգին. ուստի
անոր համար ըսաւ. «անՅը անարատ պահել աշխարհէս»։

Այսինքն՝ անվէր և անսպի. զի աշխարհիս կեան-

քը փուշերով (մեղաց տարիքներով) լցուն է. և անշնար է անխոց մնալ որ միանգամ մարմին զգեցած և զարշապարները երկրիս վերայ հաստատած է, և մանաւանդ որ առանց կշռի և ողորմութեան գիտութենէն մերկ (զուրկ) երթալու ըլլայ այսպիսի ճանապարհը։

. . . . . .

Ասոր հայելով մարգարէն, և փուշերուն տարտիկ հարուածէն դառնացած՝ բսաւ ողբալով. "դարձայ ի թշուառութիւն՝ ինչու որ զարնըվեցան ինձի փուշեք" (Սաղ. ԼԱ. 4)։

Այս խօսքը մենք ալ բսենք, և արտասուելով ողբանք մեր փշալի կեանքը. զի եթէ նա օրինակին և ստուերին մէջ, և թագաւոր մի ալ ըլլալով, ի միում նուագի փշաբեր եղաւ, թէև այլով ամենայնիւ կատարեալ և Հոգւոյն սրբոյ շնորհացը արժանացեալ էր. . . . . և տակաւին այնպիսի դառնութեամբ կը լցուէր, կը հեծէր և կ'արտասուէր, (Սաղ. Զ. 6։ ԼԱ. 4։ Ծ. 4). ուրեմն մենք ի՞նչ պէտք է ընենք եղբարք, որ այս ամենէն ալ թափուր ենք և ունայն։ Զի մեծամեծ շնորհքներ վայելած, և բարուք անուան արժանացած, և դէպ ի Աստուծոյ ընտանութիւնը վեր ելած ենք, բայց այսպիսի և այսքան փուշերով լցուած՝ տակաւին ոչ կը սգամք և ոչ կ'արտասուենք. . . . . .։

Այլ թերևս և Պօղոս մեղի պէս կրօնաւորունքրուն կ'սպառնայ ըսելով. "այն երկիրը որ իւր վերայ շատ անգամ եկած անձրեւը կ'ըմպէ, և շահե-

կան արդիւնք կը բերէ անոնց՝ որոնց համար կը մշակվի, Աստուծմէ օրհնութիւն կ'ընդունի։ Բայց այն որ փուշ ու տատասկ կը բերէ՝ անպիտան է, ու անէծքի մօտ. և անոր վերջը այրըվիլ է» (Եբր. Զ. 7–8)։

ՅՈՐԴՈՐԱԿ

Այս լսելով՝ սիրելիք, կ'աղաչեմ՝ վախնանք, սարսինք, զարհուրինք. զի եթէ ազատ ալ ըլլայինք փուշերէն (մեզաց պատճառներէն) տակաւին պէտք էր մեզի երկնչիլ, թող թէ արդէն իսկ փշաբեր ենք. ու չէ թէ մէկ տեսակ՝ այլ ազգի ազգի փուշեր կը ծնանինք, և մերձ ենք անէծքի՝ և մեր վախճանը մօտ է այրըվելու։

. . . . . .

Այս արդ՝ վասն զի ձեզի են խօսքերս, ով կրօնաւորներ . . . . . իմաստութեամբ նայինք մեր անձին վերայ, և դիտենք այս կենցաղը, ու տեսնենք մեր վարքին պատշաճը, թէ ինչո՞ւ որոշվեցանք մարմնականէն սեղանով, զգեստով, բնակութեամբ . . . . . ։

Ոչ ապաքէն ահա ասով յայտնի ցուցուցինք՝ թէ օտարներ և պանդուխտներ ենք երկրի վերայ, աղքատներ ու տնանկներ՝ տարաշխարհիկ ճամբորդներու պէս, որ իրենց նպատակ կը դնեն առաջիկայ ճանապարհին վճարելը և անդրէն դարձեալ հայրենիքնին հասնիլը։

. . . . . .

ԷՋՄԻԱԾԻՆ
30 Մայիս 1900
ԳՐԱԴԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Չկենանք ու չմնանք այս պանդխտութեան մէջ, այլ ճեպենք հասնելու աւետեաց երկիրը. և սակայն դգուշութեամբ երթանք՝ զի չըլլայ որ ճանապարհին օձը կամ կարիճը հարկանէ և կամ ծարաւը մեզ արգիլէ յաստուածային ճանապարհը երթալէն։

Օ՛ թէպէտ և պատերազմը սաստիկ է՝ սակայն մենք պէտք չէ վախնանք. զի թէպէտ և թշնամւոյն դարանակալութիւնը տեսակ տեսակ և զանազան են, սակայն մենք չերկնչինք երթալ նոցա մէջ՝ իմաստութեամբ. զի թէպէտ և նենգաւոր, բազմատանի և ոմերեւոյթ է անիկայ, սակայն մենք չսարսինք կոխելու անոր գլուխը՝ Երրորդութեամբ պատսպարված։

. . . . . .

Այսպիսի պատերազմ նախ մեր Տէրը վճարեց՝ և յաղթութեան օրինակը մեզի պարգևեց. (Մաթ. Դ. 1–10։ Մար. Ա. 13։ Դ–ի. Դ. 1–13) այսպիսի պատերազմի կը յորդորէ մեզի և Պօղոս՝ նախամարտիկ զինուորը, որ բանտարկուին պատերազմն ու մեքենայները աղէկ իմացած ըլլալով, կ՚ըսէր. «անտեղեակ չեմք նորա խորհրդոցը» (Բ. Կորն. Բ. 11)։

. . . . . .

Եւ արդ՝ քանի որ այսպիսի թշնամի ունինք, և այսպիսի պատուէր առինք սպանանելու մեր երկրաւոր անգամները, ուրեմն արիաբար կենանք այս պատերազմիս մէջ, և սպանենք որկորատութիւնը, պոռնկութիւնը և ագահութիւնը . . . . լռութիւնը դուռ դնենք մեր բերանեանցուն, և բանանք միայն Աստուծոյ քանիը։

Սանձահարենք մեր լեզուն, սանձահարենք մեր աչքերը, լսելիքները, շօշափելիքները, մեր որովայնը, որոնցմէ մահ և ապականութիւն կը ծնանի, հոգանք այս աստուածային ճանապարհէն թէ ո՞ւստի սկսաւ և ո՞ւր պիտի կատարի. վասն զի սկիզբը բարւոք է՝ զի 'ի հօրէն լուսոյ է, եթէ կատարումն ալ 'ի նոյն աւարտելու ըլլայ։

Ա՛յլ վայ է ինձ և եղուկ եմ ես. զի այսպիսի յորդորական խօսքերը չվայելէր մեզի պէս ծուլութեամբ դատապարտեալ 'ի կրօնաւորութենէ հեղգացեալներուն, այլ՝ այնպիսի խօսքերը կը վայելէ սուրբը նախահարց և մաքրեալ անձանց։

Վասն զի անոնք գիտցան դէմ կենալ քաջութեամբ այսպիսի ահագին պատերազմիս, և մարմնով ու արեամբ յաղթեցին անմարմին ախոյեանին. և հետեւելով Սողոմոնի խրատին, ճանչցան պատշաճ ժամանակը քարիր (զէնքեր) ժողվելու մարգարէից, առաքելոց և աւետարանչաց պատգամներէն, որպէս զի պէտք եղած ատենը ձգեն պատերազմողաց երեսին։

. . . . . .

Ա՛րդ՝ անոնք այսպիսի և այսքան առաքինութիւններով զարդարուած էին. իսկ մեք ի՞նչպէս, ծուլութեամբ ետ մնացած այս բազմատեսակ առաքինութեանց բարիքներէն, և մանաւանդ սուրբ գրոց մխիթարութենէն բոլորովին զրկուած, և երկնային բարեացը անճաշակ դտնուելով՝ երկրաւորը և եթ կը խորհիմք, և անոր հետեւէն բանդագուշեալ կը շրջիմք. միտ չդնելով ամենեւին Պօղոսի այն խր-

բատը որ կ'ըսէ. «թէ աշխարհս ամենայն կերպա-
բանափոխ պիտի ըլլայ» (Ա. Կորն. ԺԱ. 31) . . .
և թէ՝ «այս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ թշ-
նամութիւն է» (Կաթ. Յակ. Դ. 4) . . . . :

Լրա արդ եթէ միտ դնէինք աստուածային գրոց
ինչպէս որ պէտք է, այսպիսի դատապարտութեան
տակ չէինք իյնար . . . . . :

. . . . . .

Իսկ մենք բոլորովին հրաժարուեցանք աստուա-
ծային գրոց ընթերցմանէն, որուն մէջ պէտք էր ան-
ցուցանել մեր ամենայն կեանքը, և որ կերակուր և
ըմպելի և քաղցրութիւն պէտք էր մեզի համարել,
և Դաւթի հետ համարձակութեամբ ըսել. «որչափ
քաղցր է քու խօսքդ իմ քմացս. մեղրէն աւելի ա-
նոյշ է իմ բերանիս» (Սաղ. ՃԺԸ. 103):

Այլև մեր խօսակցութիւնը և արթնութիւնը և
հանգիստը և աշխատութիւնը և հոգեւոր երգերը
ամենն ալ սուրբ Գրոց ընթերցմունքով պէտք էր ըլ-
լալ. իսկ մենք՝ Աստուծոյ սպառնալիքը՝ անձամբ
մեր վերայ կը ձգենք, որ կ'սպառնար Իսրայէլի (մար-
գարէին բերնով) ըսելով. «պիտի տամ ձեզի՝ ոչ թէ
հացի սով, և ջուրի ծարաւ, այլ սով՝ Տէրոջը խօս-
քը լսելու». և մեք այսպիսի ծարաւով պասքեալ
ենք, ոչ թէ Աստուծոյ խօսքին չգտնըվելուն՝ այլ
մեր մտաց կամակորութեամբը . . . . . :

Ասոր համար ալ այսպիսի թշուառութեանց մէջ
ինկանք, և մեր ամենայն կեանքը և կարգերը և օ-
րէնքները եղծեալ ապականեցան, և խանգարեալ

տապալեցան։

Ինչու որ սուրբ գրոց մտադրութիւն չեմք ըներ և անոնցմէ բլալիք շահերը չեմք ամբարեր. այլ՝ անկարգութիւններու հասանք մեք կրօնաւորքս, և այն դաշինքները զոր դրինք Աստուծոյ հետ, դարձեալ վերստին մենք մեզէն լուծեցինք. . . . . ։

Քրիստոսի լուծը ձգեցինք մեր պարանոցէն, և անոր բեռը նետեցինք մեր կռնակէն. և մեր բերանները բացինք դատարկաբանութեամբ. . . . . որով բարկացուցինք Աստուծոյ անբարկանալի բնութիւնը՝ անաչառութեամբ վրէժ առնելու մեզմէ. . . . . ։

. . . . . .

Այսու ամենայնիւ տակաւին չեմք ամաչեր, այլ օր ըստ օրէ կը յաւելունք Աստուծոյ արդար բարկութեան պատճառները. . . . . ։

. . . . . .

Օ՛ի՜ մեզնէ ոմն իւր որովայնը՝ այն բազմագրելուխ գաղանը աստուածացուցած կը պաշտէ, և ամօթալեաց երկրպագութիւն կը մատուցանէ, (Փիլիպ. Գ. 19). ոմն մարմնոյ ցանկութեամբ պատրեալ՝ պոռնկութեան կը զոհէ իւր հոգին և մինչեւ 'ի ծերութիւն իւր ախտին երկրպագութիւն կ'ընէ. ուրիշ մի ալ՝ մամոնայի կը զոհէ և Աստուծոյ վայլած պատիւը և պաշտօնը անոր կը մատուցանէ, մէկ ուրիշ մի ալ՝ բարկութիւնը և գաղանութիւնը իրեւ տէր կը պատուէ. . . . . ։

Այս ասոնց վրայօք տգէտ կ'ըլլանք մեք կրօնաւորքս, Աստուծոյ չերկնչելով և մարդոցմէ չամաչելով, ու չեմք մտածեր ամենեւին թէ ասոնց ամենուն

ալ վրէժխնդրութիւնը և դատաստանը կայ երկինքը, և արդար, անխաբ և անկաշառ դատաւոր մը՝ որուն քննութիւնքը հաւաստի և անսխալ են, և թէ՝ մենք անոր առջեւ համար պիտի տանք . . . . . :

Եւ ունինք մենք մէկզմէկու հետ վէճեր, կռիւներ, հաշիւներ և ազարակներու բաժանումներ՝ աշխարհականներէն ալ աւելի. նախանձ, ատելութիւն և ոխակալութիւն՝ եւս մանաւանդ անոնցմէ աւելի. իսկ մէկզմէկ խածատելու և ուտելու մասին՝ չար եւս կը գտնըվինք դազանաներէն :

Եւ մենք որ Քրիստոսի անդամներն ենք՝ բաժնըվեցանք, ո՛չ 'ի Պօղոս և ո՛չ Ապողոս կամ 'ի Կեփաս (Ա. Կորն. Ա. 12), այլ ազգի ազգի բիւրաւոր չարիքներու՝ և այգեգործութիւններու, որ մայր է թշուառութեան, և կրպակներու և ագահութեանց :

Եւ փոխանակեցինք Աստուծոյ դրախտը՝ այգիի որթերու հետ, և կենաց պտուղը՝ խաղողի պտղին հետ, և (երկնային) ուրախութեան գինին՝ այս գինիին հետ որ շուայլութիւն կը պատճառէ, և արբայութենէն կը տարադրէ, և ամենայն արբեցողաց կցորդ և հաղորդ կը կացուցանէ. և որոնց պատճառ եղանք մեղաց, մեր այգեգործութեամբը :

Հարկ է որ գայթակղութիւններ, գան, կ'ըսէ Տէրն մեր, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով որ գայթակղութիւնը կու գայ » (Մաթ. ԺԸ. 7). և ահա մենք այս դատապարտութեանը ներքեւ ձգած ենք ինքզինքնիս :

. . . . . .

Ա՛րդ՝ սթափինք եղբարք այսպիսի արբեցութեանէ, որ ոչ թէ ի գինւոյ կամ ի ցբւոյ է՝ այլ ի խելագարութենէ և անմտութենէ, որպէս զի մեր վերայ ալ չգայ մարգարէին սպառնալիքը որ կ՚ըսէ. «վա՜յ . . . . որ արբեալ էք բայց ոչ թէ գինեիով». (Եսայի ԻԹ. 9). վասն զի այս արբեցութիւնը՝ գինւոյ արբեցութենէն չար է . . . . . :

Ա՛րդ՝ սթափելով այս արբեցութենէն, հայինք Աստուծոյ գործը՝ և Անոր ձեռքին գործը ի միտ առնենք. և լոյսին մէջ քալենք՝ որպէս զի խաւարը մեզի չհասնի. իսկ եթէ հասնի՝ աղօթելով ըսենք Աստուծոյ. «լուսաւորէ՛ Տէր, իմ աչքերս, որ մահուան քունը չքնանամ» (Սաղ. ԺԲ. 4). և ապա՝ որդիք լուսոյ և որդիք տունչնան ըլլանք :

. . . . . .

Հեղգութեան մէջ անցուցած օրերնիս լանք, և հոգիներնուս աղտը արտասուօք սրբենք. և առաջիկայ կեանքերնիս բարւոք անօրինենք :

Ազահութեամբ ստացած ինչքերնիս բաժնենք աղքատներուն, զի մեզ ամենայն ինչ սուրբ ըլլայ. «տուէ՛ք, կ՚ըսէ, ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր. (Ղուկ. ԺԱ. 41) :

. . . . . .

Օ՛ի Աստուծոյ մարդասիրութեանը արժանի ըլլալով՝ հանդերձեալ բարիքներուն հասնինք. շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի . . . . . :

ԿԱԴՈՒԱԾ
ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

«Օ՛յ անողորմ դատաստան պիտի ըլլայ անոր՝ որ ողորմութիւն չընէր» (Կաթ. Յակ. Բ. 13)։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ամենայն սուրբ գիրքերը՝ ամենայն ուրեք ողորմածութեան վերայ պատուէր կուտան մեզի, և գրքերէն անոնց ամենայն ճառերը 'ի սոյն կը կատարին։

Եւ մանաւանդ մեր Տէրը և Աստուածը՝ յաճախագոյն օրէնք կը դնէ մեզի ասոր համար. երբեմն երանութիւն կուտայ ողորմածներուն, և մեծագոյն տրիտուր կը խոստանայ (Մատ. Ե. 7։ ԻԵ. 34–41) և երբեմն կ'սպառնայ անողորմներուն՝ և անէծքի արժանի կը համարի (Մատ. ԻԵ. 41–45)։

. . . . . .

. . . . . .

Արդա՛ւեւ յիրաւի, զի անողորմները իրենք ուսուցին՝ (ցրցուցին) թէ պէտք չէ ողորմել. արդ՝ իրենց յանցանքովը կը դատէ զանոնք, զի որով չափով որ չափեցին՝ կը չափէ և անոնց, և ո՛ր դատաստանով որ դատեցին՝ կը դատէ զանոնք. (Մատ. Է. 2։ Ղուկ. Զ. 38)։

Եւ արդ՝ բազում՝ օրինակներ ունինք առ այս ցուցուլս, թէ արդարեւ անողորմ դատաստան պիտի ըլլայ

ողորմութիւն չընողներուն։ (Մաթ. ԻԴ. 45–51։ ԻԵ. 11. 27–30. 41–45։ Ղուկ. ԺԲ. 42–47։ ԺԶ. 19–31)

. . . . . .

. . . . . .

Արդ՝ երբոր անողորմներուն դատաստանը ըսաւ՝ և զարհուրեցուց, գարձեալ սկսաւ ողորմածները մխիթարել, և քաջալերել յողորմութիւն։

«Բանալի ողորմութիւնը Բարեգթագլուխ կը պարծի, կ'ըսէ, դաստակերանին դիմացը» (Յակ. Կբ. Բ. 13)։

. . . . . .

Եւ ասիկայ նոյն ինքն Տէրն մեր յայտնի ըրաւ ըսելով. «որ ըլլաք ձեր երկնաւոր Հօրը որդիքը. զի իւր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն և թէ՛ բարիներուն վերայ, և անձրեւ կը բերէ թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն վերայ» (Մաթ. Ե. 45։ Ղուկ. Զ. 30–36)։

. . . . . .

. . . . . .

Այսպիսի խօսքերը որպիսի երանութիւններէն և որպիսի փառաց պսակներէն բարձրագոյն և երանելի չեն . . . . . ։

. . . . . .

ՅՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ՝ քանի որ այսպիսի յոյս կայ մեր առջեւ, եւ չմնանք ողորմածութենէն, և տարագիր

չինենք Աստուծոյ նմանութիւնէն. այլ՝ ձեռք առ-
նենք ողորմածութիւնը, որպէս զի հաշտեցնենք զԱ-
ստուած մեզի հետ։

Փախչինք, ելեալք, անողորմներուն (ըլլալիք)
դատաստաններէն. վախնանք՝ զարհուրինք այնպիսի
ահագին սպառնալիքներէն. «զի անողորմ դատաստան
պիտի ըլլայ, կ'ըսէ, անոր որ ողորմութիւն չընիր»։

. . . . . .

Ամենայն ոք որ փուշը կը գրկէ՝ կը վնասի մարմ-
նով. և ամենայն ոք որ կը ժողվէ ագահութեան
փուշը՝ պիտի վնասի հոգւով։

Վասն զի ընչից (չափազանց) ցանկութիւնները
արդարեւ հոգիները հեղձուցանող վնասակար փուշ-
ներ են։

Օ՛ի չկայ ուրիշ մէկ մոլութիւն մի ալ՝ որ կարող-
դանայ այնպէս քակել Աստուծոյ սիրոյն ոլորը (կապը)
ինչպէս ագահութիւնը. վասն զի մէկը որ անոր գե-
րի եղած է, զԱստուած կը փոխանակէ մամոնայի հետ.
արհամարհելի է այնպիսւոյն և Աստուծոյ պատուի-
րանքները, արհամարհելի է և դեհենին սպառնալի-
քը, արհամարհելի է և արքայութեան պատիւը՝
առ սէր ընչից։

Օ՛ի եթէ արքայութեան Տէրը արհամարհելի է
այնպիսւոյն, և ինքը ոսկւոյ հետ կը փոխանակէ
զԱնի՝ կորստեան որդի Յուդայի պէս, ալ ուրիշ ի՞նչ
բան կայ իրեն համար պատուական. և ասանկներուն
վճիռը՝ Տէրն մեր ալ ինքնին յայտ յանդիման արտա-
դրեց. «չէք կրնար, ըսաւ, ծառայել Աստուծոյ և

մամոնայի» (Ղ՚-ի. ԺԶ. 13). իբրու թէ ըսել, թէ որ Աստուծոյ ծառայն է՝ մամոնայի ոչ կրնայ ծառայել և ոչ ալ ընդունիլ։ Իսկ որ մամոնային է ծառայ, Աստուծոյ ծառայութենէն ՚ի բաց ինկած է, և կռապաշտներուն հետ ունի իւր դատաստանը. զի և Քրիստոսի բերան՝ Պօղոսը, այնպիսիները կռապաշտներուն հետ կը համարի. «ագահութիւն որ է կռապաշտութիւն» կ՚ըսէ (Կողոս. Գ. 5). ալ ուրիշ ինչ յայտնի օրինակ և վկայութիւն կ՚ուզես տեսնել այս ծածուկ կռապաշտութեան մասին։

. . . . . .

. . . . . .

Իսկ՝ նմին իսկ մեր Տէրոջը՝ և վստահ եղիր. «խնդրեցէ՛ք, կ՚ըսէ, Աստուծոյ արքայութիւնը և անոր արդարութիւնը, և այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրվի». (Մատթ. Զ. 33։ Ղ՚-ի. ԺԲ. 31)։

Կը տեսնե՞ս Պարգեւատուին առատութիւնը, կը տեսնե՞ս աննախանձ շնորհքը. դուն որ մէկ կը խնդրես և նա երկուքն ալ կը պարգեւէ քեզի, մանաւանդ թէ բիւրապատիկը. վասն զի բիւրապատիկ են այս մարմնական բարիքները միայն՝ որ Աստուած պատրաստեց մեզի համար. կը թողում՝ չեմ յիշեր այն հանդերձեալ բարիքները, զի անճառելի են և անքննելի։

. . . . . .

. . . . . .

Օ՛ն ո՞վ որ առաւել կը սիրէ զքեզ՝ քան թէ դուն ինքզինքդ. և կամ ո՞վ քեզմէ առաւել կը կամի քու հոգւոյդ փրկութիւնը. թէ որ ըսես հայը

կամ մայր՝ կամ որդի՝ կամ հարազատ եղբայր, սա-
կայն ոչինչ է ըսածդ. զի եթէ (անոնցմէ շատերը) որ
աստէն կենդանութեանդ ատեն զքեզ (շատ բանէ)
զրկել կը չանան, իսկ արդ՝ մահուանէդ ետքը քու
ինչքդ ըստ ամենայնի քու կամացդ համեմատ զեռիրդ
կը մատակարարեն։ *

Ինչու որ (ընդհանրապէս) մեռնողին բարեկամ
չկայ՝ և ոչ ոք կ'ուսանէ անկից. ուրեմն դուն քու
կենդանութեանդ ատեն սփռէ՛ և տուր աղքատնե-
րուն, որպէս զի և քու արդարութիւնդ ալ յաւիտ-
եան կենայ ու մնայ. (Սաղ. ճԺԱ. 9)։

. . . . . .

Դուն քու ձեռօքդ մատակարարէ և տուր, որ-
պէս զի ծախքին աշխատութեան վարձքն ալ դուն
քեզի առնես։

Այս երաշխաւոր (կ'ըլլամ) Աստուծոյ մարդասի-
բութեանը, որ մէկ դանակ քու ձեռօքդ կարկառել
ու աղքատին տալդ՝ մեծ է Աստուծոյ առջևը, քան
թէ տասն դանակ ուրիշի ձեռօք տալդ. դուն վառէ
քու ճրագներդ որ երթան քու առջևէդ, զի ոչինչ
օգուտ է լոյսը 'ի յետուստ բերելը։

Ա՛յլ՝ դուն ժողվէ ողորմութեան իւղը, դուն
պայծառացուր քու լապտերներդ, զի և քու յարու-
թեանդ ատենն ալ չշիջանի։

Առատութեամբ սերմանէ՛ որ առատութեամբ
ալ ընձեռ (Բ. Կորն. Թ. 6). զի սերմանիքը որուն-
որ են՝ հունձքն ալ անորն է. ապա՝ դու ինքնին սեր-
մանէ, և ոչ այլոց ձեռօք. և մի՝ փուշերուն մէջ։

---

* Այս խօսքերը Կատակի սովորութեանը դէմ չեն, որուն
չարիս կատարումը քաղաքական օրէնքով ալ ապահովցած է։

Զի այն որ կը մեռնի, և ինչքը զկնի կը թողու, փուշեր կը թողու. և որ կը սերմանէ նորա համար՝ փուշերու մէջ կը սերմանէ, և անոնք ալ կը հեղձուցանեն զսերմը՝ և անպտուղ կ'ընեն. (Մաթ. ԺԳ. 7։ Մար. Դ. 7։ Ղ–ի. Ը. 7). մի՛ խաբվիք. Աստուած չարհամարհվիր, զի ինչ որ կը սերմանէ մէկը՝ նոյնը և կը հնձէ. (Գաղ. Զ. 7–8). չկայ մէկը որ որոմն սերմանէ ու ցորեան հնձէ, և կամ ցորեան սերմանէ ու որոմն հնձէ։

Եթէ սերմանեցիր ողորմութիւն՝ պիտի հնձես անկից յաւիտենական կեանքը. և եթէ սերմանեցիր մարդասիրութիւն՝ պիտի հնձես անկից Աստուծոյ դրութիւնը. իսկ թէ որ սերմանեցիր անողորմութիւն՝ պիտի հնձես անկից փուշ և տատասկ։ Դուն ինքնին եղիր քու ընչեցդ մատակարար ու մի՛ թողուր քու մեռնելէդ յետոյ ուրիշի ձեռքը. զի ասի քեզի օգուտ մը չէ. ինչու կռապարիշտ և ագահ մնես 'ի գերեզման, և ուրիշի ձեռքը թողուս քու կուռքերդ՝ որ խորտակեն ու բաժնեն. վասն զի ատկից և ոչ մէկ շահ մը կ'ըլլայ քեզի։

Զի եթէ երկիւղած մէկուն ձեռքը ձգես քու ինչքդ, և անիկայ Աստուծոյ երկիւղովը՝ սփռէ ամենը և կարօտելոց տայ, սակայն անկէ եղած արդարութեան պարգևները չշնորհվիր քեզի, այլ միայն կը բառնայ քեզմէ ագահութեան չարիքը. որ մինչև 'ի գերեզման կը պահէիր զանի ու կը պաշտուէիր։

Այսպէս թէ որ աներկիւղի մը ձեռք թողուս քու

ինչքդ՝ և այն ալ իւր մեղացը նիւթ ընէ զանի, ա-
հա մեղքը ի վերայ մեղաց դրիր. զի քու ագահու-
թեանդ (փոխարէն) տանջանաց տոկոսիքը հատուցա-
նելէն վերջը, նաեւ անոնն ալ պիտի հատուցանես՝
որուն պատճառ եղար մեղքին աւելնալուն։

Եւ ահա մենք գիտնալով ասոնք՝ չըլլայ որ ան-
մտանանք յիմարաց պէս. այլ իմասանանանք մեր կե-
նացը մէջ, և Աստուծմէ մեղի տրված ինչքը՝ դար-
ձեալ Աստուծոյ տանք։

Եւ պարտական ընենք մեզի մեծատուր Աստ-
ուածը՝ որ տոկոսով առնենք անկէ մեր տուած փո-
խը. խնայելով ու ճշդելով չտանք, զի որքան առատ
ըլլանք տալու մէջ՝ այնքան ալ կ'ուրախանանք մեր առ-
նելիք տոկոսը։

. . . . . .

Եւ արդ եթէ այսպիսի առատ և բարերար Տէր
ունինք, չենայենք անոր տալ՝ ինչ որ մեր ձեռքը
ունինք. վասն զի Այն՝ անարգամեծար Տէր է, որ
յոռին ու հնչինը կ'առնու, և տոկոսաւոր մեծամեծը
կը պարգևէ մեզի։

. . . . . .

Հացի նկանակ մի տալ՝ և արքայութեան սեղա-
նին սեղանակից ըլլալ ու հաղորդ դտնըվիլ. (Մաթ.
Ի. 35) բաժակ մի ջուր տալ՝ և հանդերձական
աղբիւրէն ըմպել. (Մաթ. Ժ. 42։ Մարկ. Թ. 40).
հանդերձ զգեցնել՝ և առաջին լուսեղէն պատմուճա-
նին արժանանալ. (Մաթ. Ի. 36)։

Սակայն ի վերայ այսպիսի մարդասիրութեան,

կան շատերը որ առանց ծախքի եղած առաքինութիւնները լիովին կը կատարեն, կը պահեն, կ'աղօթեն, կը հառաչեն ու գետնախշտի և ժուժկալ կ'ըլլան, բայց աղքատին գանկ մի ալ չեն կարկառեր. ինչ օգուտ է նոցա այն ամենը։

Բանզի անոնց չէ ինչ օգուտ մը ուրիշ առաքինութեանց կատարմանէն, թէ որ ողորմութիւն չընեն. վասն զի միւս առաքինութիւնները ճրագներ են և ասի իւղ՝ ճրագաց լուսաւորութեան պատճառը. իսկ արդ այն որ իւղը չունի՝ ճրագներէն ինչ օգուտ պիտի գտնայ. զի և յիմար կուսանքն ալ մի միայն անոր համար կորսըվեցան (Մաթ. Ի Ե. 1—12). զի ուրիշ ամեն բանով թէև կատարեալ էին, բայց անմտութեամբ՝ ողորմութեան իւղը լապտերնուն հետ չառին հետերնին. . . . . ։

Կը տեսնե՞ս, զի ուրիշ առաքինութիւններէն օգուտ մը չկայ՝ թէ որ ասի պակաս գտնըվի։

Լոյս արդ փութանք ըստ կարի ողորմած գտնըվելու, ոչ թէ միայն ինչքով՝ այլև խօսքով և կարեկից ըլլալով. ինչու որ քաղցր ու մխիթարական խօսքերն ալ՝ փոքր բաներ չեն ողորմածութեան համարին մէջ։

Լոյս մեղուցեալ եղբայրը արտասուել և յոգւոց հանելը և սգակից ու կարեկից ըլլալով 'ի բարին յոդդորել ու խրատելը, և ընկերը իւր անձին պէս սիրելը, և հիւանդին տես երթալը, և այլ ինչ որ յար և նման են ասոնց (Մաթ. Ի Ե. 34—40), տիրապէս ողորմութիւններ են, և, Բարյր 'ի Գլ-ի ՝ի պարծին Դ-ոպասպանին Դիմացը։

Որոնցմէ եւ չկենանք եւ մենք, այլ միրով, ցաւակցութեամբ եւ յոժարութեամբ կատարենք, որպէս զի՝ ողորմածաց համար պատրաստված այն բարիքներուն հասնինք, շնորհաք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։

. . . . . .

ՔԱՂՈՒԱԾ
ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱՌԻՆ

«Զեր մէջը իմաստուն ու հանճարեղ ո՞վ կայ (է), ի՞նչ անիկայ բարի վարմունքովը ցուցնէ իւր գործերը իմաստութեան հեզութեամբ»։ (Կաթ. Յակ. Գ. 13)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

. . . . . .

. . . . . .

Վասն զի այն է իմաստունը տիրապէս՝ որ գործով կ'ուսցնէ իւր իմաստութիւնը. այն է ըստ Աստուծոյ վարդապետ՝ որ նախ կ'ընէ եւ ապա կ'ուսցնէ. ինչպէս ճշմարիտ իմաստութիւնը՝ Յիսուս, որ մեզի վարդապետելու համար սկսաւ նախ գործով ընել՝ եւ ապա ուսցնել բանիւ։ (Գործ. Ա. 1)

Զմանապէս եւ ամենայն ոք՝ որ այս անունը կը կրէ, նախ եւ առաջ պարտական է ընել գործով՝ եւ ապա ուսցնել բանիւ (խօսքով)։

Զի այն որ ճարտար է բանիւ՝ խրատելու և օրէնք դնելու, և իւր գործքովը թափուր է անունց-մէ, լսողաց վնասի պատճառ է և ոչ օգտի։

. . . . . .

Ասմին իրի ըսաւ. «Ո՞վ է յեր մեջը իմաստո-ո՞ հանճարեղ, ամենայն բարի վարմունքովը ցո-ցնէ ի-ր գործերը իմաստութեան հեզութեամբ». (Կաթ. Յակ. գ. 13)։

. . . . . .

. . . . . .

Ապա էրէ նախանձ՝ դառնութիւն և հակառակութիւն ունիցիս, կ'ըսէ, յեր սրտին մեջ, մի պարծիս-ա-ս հանել ճշմարտութիւնը». (Անդ. գ. 14)։

Իրբոր ըսաւ, թէ տիրապէս իմաստունը այն է՝ որ ճշմարիտ իմաստութեան հայելով և անսոր հեզութեանը համեմատ կ'ուղղէ իւր գնացքը, և բարի գործքով ամենեցուն յանդիման կը կացուցանէ իւր իմաստութիւնը։

Ապա՝ ուրիշ երկիւղ մը կը ճգէ, և ճշմարիտ իմաստութեան հակառակը մեջ բերելով կ'ըսէ. «ապա էրէ նախանձ՝ դառնութիւն և հակառակութիւն ունիցիս յեր սրտին մեջ»։

Այս ախտերէն իւրաքանչիւրը Իրբոր իրենց կը ծառայեցնեն մեկուն հոգին, կրնան սրատաւոր ընել զանի, մանաւանդ իմաստասէրինը։

Այսն զի պարտ և արժան է իմաստասէրին ա-զատամիտ ըլլալ 'ի նախանձէ, 'ի դառնութենէ, 'ի

Հակառակութիւնէ և յոխակալութիւնէ. և ապա՝ է տիրապէս իմաստուն։

Իսկ թէ որ բանսարկուին նախանձը, դառնութիւնը և հակառակութիւնը միմիայն ունենայ իւր սրտին մէջ, «լեղ չպարծի այնպիսին սուտ հանել ճշմարտութիւնը»։

. . . . . .

Արդ՝ այն որ զասունք (մոլութիւնները) միմիայն ունենայ իւր սրտին մէջ, թող չպարծի՝ թէ ըստ Աստուծոյ իմաստուն է, այլ օտար է այնպիսին 'ի ճշմարտութենէ . . . . . ։

. . . . . .

«Օ՛ի այս իմաստութիւնը վերէն իջած չէ, այլ երկրա՛որ՝ ընչա՛որ՝ և դի՛ւական է» (Անդ Գ. 15)։

Դուն, այնպէս կը պարծիս, կ'ըսէ, և վստահ ես քու անձիդ, թէ երկնաւոր իմաստութիւնը ունիս և կը կրես քու վերայ, բայց ես, կ'ըսէ, քեզի կ'ըսեմ թէ՝ այդպիսի իմաստութիւնդ որ նախանձ և դառնութիւն և հակառակութիւն կը ծնանի քեզի, ոչ միայն երկինքէն իջած չէ, «այլ երկրա՛որ ընչա՛որ և դի՛ւական է»։

. . . . . .

. . . . . .

«Օ՛ի ո՛ւր որ հեռ և նախանձ կայ, հոն է և անկարգութիւնը և ամենայն չար բանը» (Կոր. Յակ. Գ. 16)

. . . . . .

Ամենայն չարեաց մայրը անկարգութիւնը այսինքն

նախանձը՝ մէջ կը բերէ. վասն զի անկարգութիւն ըսելով՝ ամենայն բարեաց եղծումը կ'իմացնէ. զի ուր որ անկարգութիւն է՝ հոն չփոթումն է ամենայն բանի, և չփոթումն է սկիզբն լուծման . . . :

. . . . . .

Ամէն իրի չարեաց օրինակն ալ յոգնական դրաւ և ոչ եղական :

ՑՈՐԴՈՐԱԿ

Լ։ սրդ՝ մենք սատնք գիտնալով՝ զգուշութեամբ ընտրութիւն ընենք այս խմաստութեանց մէջ, զի չ'ըլլայ որ ճշմարիտ խմաստութեան հետքէն զարտուղելով՝ մոլորվինք . . . . . :

Ուստի և ես միշտ կը զարհուրիմ ու կը տագնապիմ, տեսնելով այս (սուտ) խմաստութեան պատճառներուն անխտրաբար մեր վերայ գտնվիլը :

Որ ենք զենքենիս բան մը կը համարինք, որք կեղծաւորեալ առ աչս մարդկան՝ ենք զենքենիս յախտից ազատ ըլլալ կը ցուցնենք . . . . ոմ չարեաց :

. . . . . Վասն զի անկարգաբար կը գիտենք ամենայն տեսակ չարութեան ախտից մէջ, նախանձու, դառնութեան, հակառակութեան, չարեաց գրգռութիւններու, հպարտութեան . . . . . փառասիրութեան, ագահութեան . . . . . ոխակալութեան . . . . . բամբասանաց . . . . հրգմնահարութեան . . . . . մարդահաճութեան . . . . . :

Յ։ ասոնց պատճառով՝ . . . . . իշխանաց դռները կը յաճախենք, և պարիսպներու վերայ կը քարոզենք, ու հրապարակներու մէջ համարձակել կը խօսինք, ոչ Աստուծոյ փառացը և ոչ ընկերաց օգտին համար տաղանդնիս ի գործ կը դնենք, այլ ինքզինքնիս փառաւորելու և մարդոցմէ ռաբբի կոչուելու համար. (Մաթ. ԻԳ. 6. 7)։

Յ։ ասոր համար անհամացանք, և կոխան եղանք ոչ միայն մարդկան՝ այլև մեր զանազան ախտերուն; և ծառայք փառասիրութեան։

Յ։ ամենայն կերպով կը ջանանք նմանիլ արտաքին իմաստասիրաց, որ իրենց տեսակ մը վերարկուներովը կը պարծէին, և թանձր մօրուսնին առաջ կը ձգէին; և գանկերը կը պատուէին, ու իրենց աշակերտներովը կը խրոխտային։

Բայց մենք՝ անոնցմէ ալ վատթարագոյն գտնըվեցանք. զի նոքա թէպէտ և ասոնց կ'անդիտանային; սակայն ուսմանց մէջ ալ կարի փոյթ ունէին՝ և նոքա համար սաստիկ նեղութիւններ կը կրէին . . . լուութեան կը ծառայէին, և հեռաւոր քաղաքներ կ'ընթանային՝ ուր տեղեր որ կատարեալ իմաստասէրներ կը գտնըվէին։

Յ։ անդանօր ուրիշ բանի չէին պարապէր ըստ ասուածային գրոց, այլ նորագոյն բաներ ըսելու և լսելու. (Գործ. ԺԷ. 21). ապա և ծանրք ալ կ'ընէին, և շատ ժամանակներ ուսման մէջ կը դնեցրէին, մինչև որ իմաստութեան բովանդակ մասերը

կ'անցանէին։ (Ի վերս Իմաստասիրաց)։

Յս այս ամենուն գլուխը հասնելով՝ հազիւ թէ իմաստասէրի անուն կը ժառանգէին։

Իսկ մենք ասոնց պէս չենք, այլ երեկուան ու միւսօրուան, որք ուսանելէն առաջ գաւազանը կը խնդրենք, և սկսելէն առաջ՝ աթոռներուն տեղերը կ'որոնենք։

Յս սակաւ օրեր գրոց մէջ անցունելով . . . և անոնցմէ տասն և կամ ա՛լ աւելի քսան բանի միայն տեղեկացած, և այն ալ հատակոտոր և անկատար ըլլալով՝ ա՛յնպէս կը փքանանք ու կը հպարտանանք որպէս թէ իմաստասէր եղած ըլլայինք . . . . . ։

Յս ասոր համար ուսանելու ծոյլ, և վարդապետելու մասին փութացող եմք. կարդալու հեղգ, և իմաստասիրելու մասին արագ։

Յս 'ի վերայ այսպիսի պղերգութեանց՝ տակաւին գիրքեր կը ժողմենք ոչ թէ զանոնք կարդալու և քննելու՝ Տէրոջը պատուիրանաց համեմատ, և կամ անոնց վրայ խոկալով, հանճարաւոր խօսքերը, իմաստնոց ճառերը և անոնց առակները իմանալու, այլ անուան և մեծութեան համար, որով փոխանակ շահելու անոնցմէ՝ ևս առաւել կը դատապարտուինք. վասն զի կամ բնաւ չենք կարդար զանոնք, կամ թէ կարդալու ալ ըլլամք օգուտ մը չենք քաղեր անոնցմէ. ինչու որ առանց ուսման և մեծ աշխատութեան գրոց տեղեակ ըլլալ անկարելի է։

Օ՜ի ինչ օգուտ է ծարաւ մէկուն խցուած աղբիւրէ մը, կամ աղքատ մէկուն ծածկեալ գանձէ

մը. ասանկ են և առանց անոր վարժելու դիրք ժողովողները։

. . . . . .

Բրիստոսի յանդիմանութեանը արժանաւոր նոր դպիրներ ու փարիսեցիներ, որք արտաքինը գեղեցկապէս կը լուանան, ու ներքինը լեցուն է անառակութեամբ, չարութեամբ և ամենայն պղծութեամբ. (Մաթ. ԻԳ. 25։ Ղ-ի. ԺԱ. 39) որոնք կը կապեն ծանր ու դժուարակիր բեռներ ու կը դնեն մարդոց ուսերուն վրայ և իրենց մատովը չեն ուզեր շարժել զանոնք. (Մաթ. ԻԳ. 4։ Ղ-ի. ԺԱ. 46)։

Իսկ ուրիշներ ալ՝ պատուիրանաց շատերը կը լուծանեն, ամենեւին խիղճ չընելով արհամարհանքը. ոմանք ալ սաստկութեամբ կը խղդեն զանի (պատուիրանքը), և ոմանք ալ իրենց ծուլութեամբը գահավէժ կ'ընեն զանիկայ, որոնց երկուքն ալ արտաքուստ արժանաւոր են, զի մարդահաճութեամբ և փառասիրութեամբ կ'ընեն զասոնք։

Ասոնցմէ մէկը՝ որպէս զի կրօնաւոր և խստամբեր երեւայ, պատուիրանաց աւելիով կը վարուի. իսկ միւսը՝ որպէս զի քաղցր ու հաճոյական երեւայ, պատուիրանաց շատերը կը լուծէ, 'ի կշտամբանս իւր անձին և 'ի գայթակղութիւն լսողաց։

Բայց ասոնք որո՞նք են. (մեք) որք հրաման առինք միջին արքունական ճամբայէն գնալ, ու չխոտորիլ յաջ կամ յահեակ։

Իսկ մեք՝ անուան և կորուսիչ արծաթին համար երկու կողմն ալ կը խոտորինք, և արքունական ճամ-

բանիերէն, որ է պարզութիւն առանց կեղծաւորութեան, դուրս կ'ելլենք. և 'ի վերայ այսոցիկ կը դառնամք ու մէկզմէկ կը խածատանք մինք երկնաւոր եղբարքս, և չենք գիտեր թէ որքա՞ն հոգւոյ ենք։

Ինոր համար կը նախանձիմք միմեանց հետ և մէկզմէկ կ'ատենք, և կը թշնամանենք ու կը բամբասենք, և հակառակութեամբ կը վարվինք մեր ուսումնակիցներուն հետ . . . . . :

. . . . . .

Այլ եթէ մինք հոգւոյն աշակերտներն ըլլալով՝ կ'ախտանամք այս տեսակ ախտերով, արդեօք ո՞վ պիտի կրնամք ազատել այսպիսի ախտերէն. զի եթէ արդարև 'ի հոգւոյն եղած ըլլայինք՝ պարտական էինք հոգւոյն հեղութիւնը մեր անձին վերայ ստանալ, և ամենեցուն փարելի ըլլալ, ամենն ալ անձերնուս պէս սիրել, և ամենուն հոգւոյ վերքը մեզի վերազրել։

Լացողներուն հետ լալ՝ և խնդացողներուն հետ խնդալ, որպէս զի մինք ալ կարող ըլլայինք ըսել Պողոսի հետ. «ո՞վ կը հիւանդանայ՝ որ ես չեմ հիւանդանար. ո՞վ կը դայթակղի՝ որ իմ սիրտս չայրիր» (Բ. Կորն. ԺԱ. 29)։

Այլ ասոնցմէ անբաւ հեռաւորութեամբ 'ի բաց ինկանք, և թերեւս մեզի ըսվեցաւ 'ի հեռաստանէ Աստուծոյ ձայնը, այն ձայնը որ լալոյ և արտասուաց է արժանաւոր. «թող չենայ, կ'ըսէ, իմ հոգիս այդ մարդոցը վրայ յաւիտեան, ատոնց մարմին ըլլալուն համար» (Դանիէլ. Զ. 3)։

Եւ ասոր համար (լոկ) հնչաւոր եղծնք. և երկրի վերայ կցեցաւ մեր խմաստութիւնը՝ մանաւանդ թէ տգիտութիւնիս։

Այլ երանի՝ թէ գոնէ երկրաւոր իմաստուն ըլլայինք, և ոչ թէ լեզուագար և ընդվայրաբան. զի այս երկրաւոր իմաստութիւնն ալ քիչ նպաստաւոր չիղաւ (մարդկային) բնութեանս բարեկարգութեան մասին։

Զի քաղաքական օրէնքներն ու դատաստանաց գործերը, և չափերն ու կշիռները, և փոխառականութեան առևտրական փոխոխմունքները՝ և ուրիշ ասոնց նմանները՝ ասով կատարվեցան։

Արդ՝ մենք այս երկրաւոր իմաստութիւնը չունինք, և երկնաւորէն վաղուց հրաժարեցանք. և մեր պատճառաւը եկեղեցւոյ օրէնքներն ալ խափանեցան՝ և մարդիկ անկարգութեան մէջ ինկան։

Ինչու որ եթէ քանոնը ծուռ ըլլայ, քանի՞ մանաւանդ անով ուղղվողները. նոյնպէս և մենք՝ որք կը կերպարանեմք զմեզ տգիտաց աչքին՝ թէ քանոն ենք և գրոց աշակերտներ, և ռամիկներէն աւելի անկարգաբար կը վարվինք միմեանց և ուրիշներու հետ. իսկ անոնք որ մեզի կ'աշակերտվին՝ ոչպիսի անկարգութեան մէջ չեն ձգեր իւրեանց անձը. նաև աւելի կը հաստատվին չարութեան մէջ, առ ձեռն պատրաստ օրինակ և պատճառ ունենալով մեզ՝ իւրեանց մեղացը։

Եւ (մենք) վասն զի աղէն կծեցուցիչ բնութիւնը՝ ի բաց դրինք և անհամացանք, (Մաթ. Ե. 13։ Մար. Թ. 49։ Դուկ. ԺԴ. 34). անոր համար կո-

խան եղանք և այսպէս կատարեանաց ամենայն աշխատ-
հի. և Աստուծոյ անունը և վարդապետութիւնը
վասն մեր կը հայհոյի՝ 'ի մէջ. . . մարդկան։

Զի որ տեսակ չար անուն չգրուեցաւ անոնցմէ
մեր վրայ. ոչ սոսկ՝ այլ արդարութեամբ։

Զոմանս 'ի մէնջ կը բամբասեն . . . . իբրև
կեղծաւոր և մարդահաճոյ, զոմանս իբրև շքեղող և
ընդվայրաբեր . . . . զոմանս աբծամիտսէր և ընչից
ծառայ, զոմանս քծնեայ և ծոյլ . . . . ։

Եւ ճշմարտութեամբ մեր վերայ կատարուեցաւ
Դաւթի մարգարէութիւնը, «եղանք մեք, կ'ըսէ,
նախատինք մեր դրացիներուն, և ծաղր ու կատակ մեր
շուրջը եղողներուն» (Սաղ. ԺԸ. 4։ ԺԹ. 7). . . . . ։

Զի եթէ այսպէս և ամէն աւելի վատթարագոյն
չըլլայինք, չէինք երգիծանվեր անոնցմէ. ու թէ որ
երգիծանվէինք, եբանութեան արժանաւոր կ'ըլլայինք։

Ինչու համար էին նախատեր ու բամբասեր ըզ-
նախնի վարդապետները, և մանաւանդ (այն) երա-
նելիները զորոնք տեսանք մեր աչքովը, այլ կը սի-
բէին ու կը պատուէին և հրեշտակի պէս կը համա-
բէին զանոնք։

Զի նոքա մեզի պէս անադորոյն և Աստուծոյ
բանին վաճառականները չէին, այլ նոցա ամենայն
խօսքը և գործքը ըստ Աստուծոյ և Աստուծոյ հա-
մար էին։

Զի ան զի նոքա աղ էին սղջոց վերայ (Մատ-
Ե. 13) և լոյս սրբոց վերայ (Մատ. Ե. 14). և
գործքով մանաւանդ թէ խօսքով ուսանէին վարդապե-

տութիւնը. և թէ որ մարդոցմէ մէկը նախատէր զանոնք, սակայն և այն ալ՝ վասն Աստուծոյ, և յանդիմանող խօսքերնուն և ամբարիշտները սաստելնուն համար կ'ըլլար. հետեւաբար այն նախատինքն ալ երանութիւն կը սեպվէր իրենց՝ ըստ Տէրունական բանին. (Մաթ. Ե. 11։ Դ-ի. Զ. 22)։

Իսկ մեր (կրած) նախատինքը և ոչ մէկ մխիթարութիւն մը ունի, այլ միայն եղկութիւն և վայ. զի մեր ախտերուն համար կը նախատվինք անոնցմէ որք մեզմէ կը դայթակղին. և (ամենեւին) չեմք զարհուրիր Քրիստոսի դատաստաններէն, որ ըսաւ. «ով որ կը դայթակղեցնէ այս պզտիկներէն մէկը որ ինձ կը հաւատան, աւելի աղէկ էր անոր՝ որ իշու աղացքի քար մը իր վիզէն կախվէր ու ծովը ձգվէր» (Մաթ. ԺԸ. 6։ Մար. Թ. 41)։ և դարձեալ թէ «հարկ է, կ'ըսէ, որ գան դայթակղութիւնները. բայց վայ այն մարդուն՝ որուն ձեռքովը կու գայ դայթակղութիւնը» (Մաթ. ԺԸ. 7)։

Իւ արդ ասոնք լսելով ճղճղալը, նայինք մեզի և սթափինք այս ահագին արբեցութենէս, (եթէ երբէք արբեցութիւն անուանել պէտք է ասի և ոչ խելագարութիւն,) և արիութեան փոյթը առնենք մեր անձին վրայ։

Իւ իւրաքանչիւր ոք մեզմէ՝ սովորական սխալանքնիս և ոխերնիս թողունք, և սուրբ վարդապետներուն ետեւէն երթանք. մանաւանդ թէ աշխատինք նմանիլ նոցա ամենայն բարեկրութեանցը։

Իւս առաւել միտ դնենք գրոց ընթերցուածոցը.

անոր մէջ դեգերինք, անոր պարապինք և անոր վերայ թափենք մեր մտացը բոլոր զօրութիւնը և աչքերնուս լոյսը. այն թող ըլլայ մեզի կերակուր և ըմպելի, և գանձ ու մեծութիւն, և փառք, զօրութիւն ու հանգիստ. (Սաղ. ճԺԸ. 1—176)։

Լու ասենք ուչ թէ ես՝ այլ Պօղոս (առաքեալը) կը հրամայէ ձեզի, մանաւանդ թէ և Պօղոսի Տէրը. վասն զի և նա (Պօղոս) գրեց իւր աշակերտին, «Մնա դիր, կ'ըսէ, ընթերցուածոց (գրոց սրբոց) միխիթարութեան՝ վարդապետութեան, և անփոյթ մի ըլար քու վերայդ եղած շնորհքներուն վրայով». (Ա. Տիմ. Դ. 13. 14). իսկ Տէրն մեր կ'ըսէ. «քննեցէք գիրքերը». (Յովհ. Ե. 39)։

Արդ, կ'աղաչեմ, աշակերտվինք մենք ալ այսպիսի խրատներու, և այս մասին ունենցած ամեն թերութիւններս լցնենք, և կտրենք պատճառները՝ որք պատճառանք կը կալին (կ'որոնեն), և խոկանք Աստուծոյ օրէնացը վրայօք, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել։

Լու գրենք զանոնք (Աստուծոյ օրէնքները) մեր տանը սեմացը և դուռներուն վերայ, և այսպիսի խնամատարութեամբ միւս առաքինութիւններն ալ իսկապէս կատարենք, զի և խոստացեալ բարեացը արժանի ըլլանք հասանել՝ շնորհքով և մարդասիրութեամբ Տէրուն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

. . . . . .

ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂՈՒԱԾ
ԻՆՆԵՐՈՐԴ ԾԱՌԻՆ

«Մեկլմեկ մի բամբասէք եղբարք. այն որ իւր եղբայրը կը բամբասէ, կամ իւր եղբայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ, և օրէնքը կը դատէ». (Կաթ. Յակ. Դ. 11)։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Բամբասանքը՝ ամենայն ուրիշ յանցանք համարուած են ամենայն Աստուածաշունչ գիրքերէն և բարի մարդոցմէն . . . . . .

. . . . . .

. . . . . .

Այս զի բամբասանքը՝ մեծագոյն չարեաց կարգը դասուած է, ուստի և Պօղոս մեծապէս կը դատապարտէ բամբասողները ու կ'ըսէ. «. . . Բամբասողները . . . Աստուծոյ արքայութիւնը չ'են ժառանգիր». (Ա. Կորն. Զ. 10)։

Նորին աղագաւ և սա ասա կ'զգուշացնէ քաղաքութեամբ, «Մեկլմեկ մի բամբասէք, կ'ըսէ, եղբարք»։

Նեւ այսորիկ յաՀորդ բանիւ կարի լաւ կը մխիթարեն լսողները։

«Այն որ իւր եղբայրը կը բամբասէ, կ'ըսէ, կամ իւր եղբայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ, և օրէնքը կը դատէ» (Դ. 11)։

. . . . . .

«Իսկ երկնի օրէնքը դատես, ալ դո՞ն օրէնքը կապարող չէ՝ այլ դատա՞ւոր». (Կաթ. Յակ. Դ. 11)։

. . . . . .

. . . . . .

«Մ՚իայն մեկ օրէնադիր ո՞ւ դատաւոր մը կայ, որ ինքը կարող է փրկել և կորուսանել». (Կար. Յակ. Դ. 12)։

Ընդաւ հեռաւորութեամբ խտրոց դրաւ մէջ տեղը, որպէս զի անով ամէնքնէ զանոնք՝ որք օրէնքը կը բամբասեն ու կը դատեն, և ամենեւին մեղք չեն համարիր . . . . . .։

Այսու աղագաւ ըսաւ. «Մ՚իայն մեկ օրէնադիր ո՞ւ դատաւոր մը կայ, որ ինքը կարող է փրկել և կորուսանել»։

. . . . . .

. . . . . .

Արդ երբոր ցուցուց միմիայն Օրէնսդիրը և Դատաւորը, այն որ իշխանութիւն ունի փրկելու կենցուցանելու և կորուսանելու, ապա կը սաստէ ևս։

«Դո՞ն ո՞վ ես, կ՚ըսէ, որ ընկերդ կը դատես». (Դ. 12)։

. . . . . .

. . . . . .

Կը տեսնա՞ս զի բնաւ թոյլ չտար դատելու մարդոցմէ զոր, այլև կարի սաստելով մը կը յանդիմանէ։

. . . . . .

Իւր դարձեալ կ՚ըսէ (առաքեալը). «Այսու հետեւ ժամանակէն առաջ մի՛ դատէք, մինչեւ որ գայ Տէրը որ խաւարին գաղտնիքը լուսաւոր պիտի ընէ,

ու սրտերուն խորհուրդները պիտի յայտնէ. և ապա ամեն մէկուն գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ »։ (Ա. Կորնթ. Դ. 5)։

ՅՈՐԴՈՐԱԿ

Այսպիսի ահագին խօսքերը լսելով, սիրելիք, սթափինք այս (մեր) խելագարութենէն, և անողոր-մաբար չդատենք զոք՝ յանիրաւի կամ իրաւամբ, զի չ'ըլլայ որ անողորմներուն (ըլլալիք) դատաստանը ընդունինք մեր վերայ։

(Լրթէ) մեղաւոր ու վերաւորեալ է այն որ կը դատիս, ուրեմն (անիկայ) քեզմէ ողորմութեան և արտասուաց է արժանաւոր՝ և ոչ դատապարտութեան, կարեկից լինելու ու ցաւելու՝ և ոչ բամբասանաց։

Այլ եթէ արդար և անարատ է այն որ կը դատիս, ուրեմն առաւել պէտք էր քեզի երկնչիլ անկից ու դողալ, զի անիկայ ազատ է դատաստանէ ու բամբասանքէ, և դուն առ նախանձու և կամ առ չարութեան կը դատիս զանի իբրեւ յանցաւոր, և 'ի լուր բազմաց կը բամբասես իբրեւ մեղաւոր։

Օ՜ի կեղտ անունը կը դնես անոր վերայ, որպէս զի ծածկէ արդարութեան բարի անունը որ դրված էր նորա վերայ։

. . . . . .

. . . . . .

Իսկ առաւել պէտք է մեզի երկնչիլ Քրիստոսի դատաստաններէն, որ սաստկապէս կը յանդիմանէ

զանոնք, որք այնպէս (անիրաւութեամբ) կը դատեն՝ իւրեանց մեղքը ոչինչ վարկանելով թէեւ մեծամեծ ըլլան, իսկ ընկերաց համար շատ փոքրագոյնին ալ դատապարտ եւ յանդիմանիչ կ'ըլլան։

Պատն որոյ ըսաւ Տէրը. "Ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, եւ քու աչքիդ մէջի գերանին չ'ես նայիր . . . . . ։ Կ'ողծաւոր՝ նախ քու աչքէդ գերանը հանէ, եւ ապա պիտի նայիս եղբօրդ աչքէն շիւղը հանելու"։ (Մատթ. Է. 3, 5. Ղ-ի. Զ. 41, 42)։

. . . . . .

Արդ սի՛րելիք, մենք ալ որ այսպիսի դատաստանի տակ կը գտնըվինք՝ զորոնք Տէրը դատապարտեց . . . չդատենք մարդոցմէ եւ ո՛չ մէկը . . . զի չ'ըլլայ որ մեր առ Աստուած ունեցած սակաւ ինչ համարձակութիւնն ալ կորսընցնենք, եւ անոր կրկնապատիկ դատաստանին տակ ձգենք ինքզինքնիս։

. . . . . .

Այս այսպանի է այն փարիսեցիին որ դատեց զմաքսաւորը . . . . եւ կորսընցուց իւր ունեցած արդարութիւնն ալ. (Ղ-ի. ԺԸ. 10, 14)։

. . . . . .

Այս արդ դուցէ մէկը ըսէ թէ, ի՞նչ կը խօսիս, մի՞թէ պէտք չէ՞ մէկուն յանցաւորը դատել ու յանցադիմանել, եւ կամ թէ սուրբերն ալ ասանկ չդատեցի՞ն զյանցաւորները։

Այս ինչո՞ւ արդեօք Պօղոս պոռնկութիւն ընող Կորնթացին սատանային կը մատնէր, (Ա. Կոր. Ե. 5.),

և դարձեալ թէ, զորոնք մատնեց սատանայի զի խրատուին չհայհոյել, (Ա. Տիմ. Ա. 20.), և դարձեալ թէ, իւր աշակերտին Տիտոսին ալ կը գրէր, թէ յանդիմանէ՛ ամենայն ասստկութեամբ, (Տիտ. Բ. 15). իսկ . . . Պետրոս առաքեալը՝ ոչ միայն կը յանդիմանէր ու պատուհասակոծ կ'ընէր, այլեւ մահուանն եւս կը մատնէր Անանիան ու Սափիրան, (Գործ. Ե. 1—10). և այլ այսպիսի բիւրաւոր վկայութիւններ կը գտնեմք, կ'ըսեմ, աստուածային գրոց մէջ՝ սրբոց վրայօք, որք դատեցին զյանցաւորները։

Հայց արդ՝ ասոնք որ դու կ'ըսես, խրատ էին և ոչ յանդիմանութիւն. զի երբոր Պօղոս՝ պատուիրութիւն ընողը սատանային մատնելը ըսաւ, (Ա. Կորն. Ե. 5), անոր վերայ յարեց ըսելով, "Որ հոգին փրկըվի Տէր Յիսուս Քրիստոսի օրը". (Ա. Կորն. Ե. 5)։

Նոյն միտքով է և այս, զորոնք մատնեց սատանայի՝ զի խրատվին չհայհոյել (Ա. Տիմ. Ա. 20), կամելով աղատել զանոնք անսերելի մեղքերէ։

Իսկ երբոր ըսաւ, թէ "Յանդիմանէ՛ ամենայն ասստկութեամբ" վասն մեղաց, և մխիթարութիւնը մօտ դրաւ ապաշխարութեանը համար, "մխիթարէ՛" ըսելով. (Տիտ. Բ. 15)։

Տեսար, երանելւոյն յանդիմանութեան պատճառը, զի մեղքէ ետ դարձընելու և ուղղութեան բերելու հարմար էր, և ոչ թէ դատապարտելու։

Ասոնց կը հայի և Պետրոսի՝ Անանիան ու Սափիրան մահու մատնելը. (Գործ. Ե. 1—10)։

Օ՛ի թէպէտ և մեռնողներուն օգուտ մը չ'եղաւ,

այլ սակայն մեծ վախ ընկաւ եկեղեցւոյն վերայ այս եղելութենէն, որպէս զի ամ չյանդգնի ոք փորձել Սուրբ Հոգին, այս նախադիմ սոսկալի օրինակներէն եւ եղբը։

Կը տեսնեմ սրբոց ըրած յանդիմանութեանց շարը. յանդիմանութեան այսպիսի շահերը՝ ինքնին Տէրն մեր յայտ յանդիման ցրցուց, «Եթէ քեզի մտիկ ընէ, կ'ըսէ, շահեցար քու եղբայրդ». (Մաթ. ԺԸ. 15.) «Թէ որ մտիկ չընէ . . . հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի» (Մաթ. ԺԸ. 16, 17)։

Ընդ եթէ այսպիսի մտոք ձեռք առնես յանդիմանութիւնը, այսինքն ցաւակցաբար շահել եղբայրը՝ և մեղքէ ետ դարձընել, ոչ ոք կ'արգիլէ կամ մեղադիր կ'ըլլայ քեզի. զի զայդ ընելով՝ գովութեան ես արժանաւոր մանաւանդ՝ և ոչ մեղադրութեան. զի որ կը հանէ պատուականը անարդէն՝ բերան Աստուծոյ պիտի կոչվի. (Երէմ. ԺԵ. 19)։

Այլ այս է որ տիրապէս արգիլուած է քեզի գործել, չձաղել առաջի բազմաց և յանդիմանութիւնը հրապարակագոյժ չընել, որպէս զի առաւել չվերաւորես վշտանալ Հոգին, կամ դարձեալ լրութեան մէջ ձգես։

Այլ ամենայն կերպով պիտոյ է պահես դէպ ի նա՝ հեզ և մարդասէր օրէնքը Քրիստոսի, որ մեր ակարութիւնները առաւ՝ և մեր ցաւերը վերցուց. (Եսայ. ԾԳ. 4)։

Այս ոՐն է այն օրէնքը. «Եթէ, կ'ըսէ, մեղանչէ քեզի դէմ քու եղբայրդ, գնա՝ յանդիմանէ՝ անիկայ՝

երբոր դու և նա միանակ էք »։ (Մաթ։ ԺԸ։ 45)։

Եւ ի՞նչպէս պէտք է յանդիմանել։ կ՚ըսէ։ մի՛ խստութեամբ այլ քաղցրութեամբ։ ։ ։ ։ ։

։ ։ ։ ։

մանութեան դատաստանէն, որք կը յօժարին նոյն չարութեան գործերուն։

Օ՛ն զորօրինակ ծածուկ յանցանքները առաջի ամենեցուն յանդիմանել ու նշաւակելը մեծ մեղադրութիւն է առաջի Աստուծոյ և մարդկան, նոյնպէս ալ յայտնի յանցանքները՝ միանգամ և երկիցս խրատելէ ետեւ թաղուցանելը, և բարեկամաբար վարվելով զանի նոյնին մէջ հաստատելը՝ դատապարտութենէ ազատ չէ։ *)

Ա.յսպիսի դատաստանը և Տէրը ինքնին արդարացուց, ըսելով. «Եթէ քեզի մտիկ չընէ, քու հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ . . . . իսկ թէ որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ՛» (Մաթ. ԺԸ. 16, 17). այսինքն՝ յայնժամ բազում վկայից առջեւ յանդիմանէ։

Բայց այս երկուքն ալ Տէրը և Առաքեալը՝ ասոնք ըսելով, ամենայն յանդիմանել ուզողներուն համարձակութեան դուռ չեն բանար, այլ միայն՝ ժողովրդեան առաջնորդներուն ու վերակացուներուն։

Այ՛ ոչ թէ միայն առաջնորդներուն, այլեւ ամենայն առաքինութեան գործոց մէջ վկայակալներուն **), որք այս տեսակ գործի մէջ կը վարվին, ոչ նախանձով, ոչ հակառակութեամբ, ոչ քինախնդրութեամբ, ոչ բարկութեամբ, ոչ ոխակալութեամբ, ոչ ատելու-

*) Թէեւ այս Յորդորակին խօսքերը ընդհանրապէս մէկմէկ չբամբասելու համար գրված է, բայց միանգամայն ամենց ունկարգ ընթացքը՝ ընդհանուրին օգտին համար հրապարակել պէտք ըլլալը կ'ուսուցնէ։

**) Ներկայ դարուս մէջ այս տեսակ հրապարակութիւնները օրագիրներուն ալ կը վերաբերի, միայն թէ խոհեմութեամբ։

թեամբ, ոչ առ աչս մարդկան, և ոչ փառասիրու-թեամբ. այլ՝ հեզութեամբ և սիրով, երկայնմտու-թեամբ և քաղցրութեամբ, վասն Աստուծոյ սիրոյն, և եղբայրը շահելու, և անկարգութիւնը լուծելու, և գայթակղութիւնը մէջտեղէ բառնալոյ համար. (Ա. Կոր. Ե. 2, 13), զի չըլայ որ փոքր մի խմորը ամենայն զանգուածը խմորէ. (Ա. Կոր. Ե. 6. Գաղ. Ե. 9):

Իսկ որ անկարգաբար ձեռք կը զարնեն յանդի-մանութեան, մեծ մեղադրութեան արժանաւոր են:

. . . . . .

Յս մանաւանդ մեծ դատապարտութեան արժա-նաւոր եմք մեր համար՝ որ մեր չարութիւններովը ուրիշները կը դատապարտենք. այսինքն՝ մենք ալ նոյն և նման պակասութեանց մէջ ըլլալով, մերը բանի տեղ չենք համարիր, և ուրիշները անով կը բամբասենք:

. . . . . .

Արդ՝ մենք ասոնք գիտնալով, եղբարք, եւ կենանք միկզմիկ դատելէն. լռեցնենք մեր լեզուն բամբասելէն, և ուրիշներու աչքին շիւղը հնայելով՝ մեր աչքին գերանը հանենք. . . . . :

. . . . . .

. . . . . .

Յս եթէ մեր աղօթքին մէջ թողումք անոնց որ պարտապան են մեզի, ապա և մեր պարտուցը թո-ղութիւն պիտի գտնենք 'ի Տեառնէ Քրիստոսէ, (Մաթ. Զ. 14.), որուն բիւրապատիկ պարտապան եմք:

Ոչ թէ ակամայից միայն՝ այլեւ կամաւ և գի-տութեամբ եղածներուն. մանաւանդ եթէ հետեւա-

բար ողորմութիւն ալ ընենք կարօտելոց, գիտութեան հացը բրդելով բարոյապէս քաղցելոց, կամ թէ նիւթապէս, մերկը հագուեցնելով, և անյարկ աղքատները յարկի տակ առնելով. (Մաթ. ԻԵ. 35. 36)։

Յայնժամ պիտի ծագի կանուխ մեր լոյսը՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ողորմութիւնը, և արժանի պիտի ընէ զմեզ իւր ողորմութեանը, զթութեանը և արքայութեանը։

Որոնց թող ըլլայ մեզ ամենեցուն հասնել՝ շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։

. . . . . .

ՔԱՂՈՒԱԾ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԾԱՌԻՆ

«Երդ՝ այսու-հետև մեծապո-ններ՝ լայնէ ու ողբա-յէ այն ըլլա-ռու-թեանց վերայ, որ պիտի գան յեր վերայ» (կաթ. Յակ. Ե. 1)։

. . . . . .

«Օ՛ն յեր մեծու-թիւնը՝ յուլնալ է, և յեր հանդերձ-ները ցեցի կերակու-ր». (կաթ. Յակ. Ե. 2)։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ամենայն ուրեք՝ մարմնական մեծութիւնը որ 'ի զրկանաց և 'ի տոկոսաց ժողովեալ է, պարսաւեալ

է յաստուածային գրոց, և ունայնութիւն և մեռոտիք է անուանեալ։

. . . . . .

Ինչ իրի ըսաւ, «Զեր ծածո-ութիւնը՝ յոչինչ է», որուն յուսացեալ էք, զի ամենն ալ հոս պիտի մնայ։ Այլ դուք մերկ եկաք յաշխարհս՝ և անդրէն մերկ-անդամ պիտի դառնաք. «վասն զի, կ'ըսէ, մեռնելու ատենը ամենեւին բան մը իւր հետ պիտի չառնէ, և իւր տանը փառքը իւր ետեւէն պիտի չիջնէ։ Այլ նորա անձը իւր կենացը մէջ պիտի օրհնի»։ (Սաղ. ԽԸ. 18, 19)։

. . . . . .

Այս բարեւոք ըսաւ թէ՝ (Զեր ծածո-ութիւնը յոչ-ինչ է, և յեր հանդերձեալները ցոյցի կերպո-ր են» (Ե. 2)։

. . . . . .

«Զեր արծաթին ու ոսկին ժանգահար է, կ'ըսէ, և անոնց ժանգը յեղէ դէմ վկայութիւն պիտի ըլլայ, և յեր մարմինը պիտի ուտէ. կրակի պէս գանձեցիք յեղէ վերջին օրերուն համար». (Կաթ. Յակ. Ե. 3)։

. . . . . .

«Ահա-ասիկ, կ'ըսէ, մշակներուն վարձքը՝ որ յեր արտերը կը գործեն, յեր ոռնէն է. յեղէ ընկերքը կ'աղաղակեն, և հնձողներուն բողոքը՝ ջրոց-ութեանց Տէրոջը ականջներուն հասաւ». (Կաթ. Յակ. Ե. 4)։

. . . . . Մեծատունները (որոնք) անգթութիւն կը ցուցնեն՝ աղքատները զրկելու և կեղեքելու ատենին։

Եւ նոքա ալ՝ վասն զի տկար են ամբարիշտնե-
րուն ըրած զրկանաց փոխարէն հատուցանելու մա-
սին, այլ միայն դէպ 'ի վեր առ Աստուած կ'աղա-
ղակեն՝ ըսելով, «Տէ՛ր, ո՛վ Տէր ու մի՛ լուեր, այլ
խնդրէ՛ մեր վրէժը ասոնցմէ»։

. . . . . .

Եւ այս ձայնը շատ անգամ կը շարժէ զԱստ-
ուած՝ անօրէններէն վրէժ առնելու. ասիկայ և ինքն
Աստուած ըսաւ մարգարէին բերնովը, «Աղքատաց
տառապանքին և տնանկաց հեծութեանը համար՝
հիմայ պիտի ելնեմ», (Սաղ. ԺԱ. 5)։

Վասն զի ամենեւին չկայ բան մը՝ որ այնպէս
բարկացնէ զԱստուած, որչափ որ աղքատը զրկելը
և որբին ու այրիին անիրաւութիւն ընելը։

Եսիկայ և Պօղոս ալ ուրիշ խօսքով կը ներկա-
յացնէ որով և կը պարսաւէ զանոնք՝ որք զրկելու
կը յօժարին։

«Ինչո՞ւ համար դուք չէք զրկվիր, կ'ըսէ, և ին-
չո՞ւ համար դուք առաւել չէք նեղվիր։ Այլ դուք
կը զրկէք և կը նեղէք, և այդ ալ եղբայրնիդ։ Մի՞թէ
չէ՞ք գիտեր թէ անիրաւները Աստուծոյ արքայու-
թիւնը չեն ժառանգեր». (Ա. Կորնթ. Զ. 7—9)։

Տեսա՞ր, զրկանաց և անիրաւութեանց փոխարէն
տրիտուրը, զի արքայութենէն եւս տարագիր կ'ընէ.
զի եթէ զրկանք ընող մէկուն համար բիւրաւոր քա-
հանաներ իրենց ձեռքը աղօթքի ու պաղատանքի
վերցնեն Աստուծոյ առջեւ, և ահա միայն մէկ
զրկուած այրիին աղաչանքն ու արտասուքը՝ կրնայ

մեռնել համարձակութեամբ Աստուծոյ առջեւն, և անոնց ապօթքը խափանել ու անընդունելի ընել։

Վասն զի անկնա՛ր է զրկողին ողորմութիւն գտնել Աստուծմէ, եթէ զրկանքը՝ զրկուողին եւ չդարձընէ. ինչու որ եթէ զրկանաց գոյքը ողորմութեան ալ նուիրէ, և եթէ ուխտելով Աստուծոյ ընծայէ՝ չէ՛ ընդունելի, և չհաշտուիր Աստուած անոր հետ . . . . . *)։

Ասիկայ յայտնի կ'ընէ և Տէրն մեր, որ մեռնելով Զաքէոսի տունը, չդոմեց զանի երբոր անիկայ ըսաւ՝ թէ "Տէր՝ ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կուտամ" (Ղ-ի. ԺԹ. 8.). ինչու որ 'ի զրկանաց անտի էր։

Իսկ երբոր դարձեալ ըսաւ, "Ու թէ որ մէկուն զրկանք ըներ եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ անոր", (Ղ-ի. ԺԹ. 8), այն ատեն Յիսուս ըսաւ, "Այսօր այս տանը փրկութիւն եղաւ ինչու որ ասիկայ ալ Աբրահամի որդի է". (Ղ-ի. ԺԹ. 9)։

. . . . . .

"Լ-ա հնչողներո՞ն բողոքէ՝ զօրութեանց տէրոջը ա-կանջներո՞ն հասա՞ւ". (Յակ. Կաթ. Ե. 4)։

Այս խօսքովս կ'իմացնէ մեծատանց (ումանց) բազմապատիկ չարութիւնը. մերթ անոնց ագահութիւնը և արծաթասիրութիւնը կը ցուցնէ, և մերթ աղքատ-

---

*) Որ կը մատուցանէ ողջակէզ՝ (ողորմութիւն) աղքատաց ինչքէն, այնպէս է, որպէս թէ մորթելու ըլլայ մէկը որդի մը հօրը ոչքին առջեւ". (Սիրաք. ԼԴ. 24)։

ները զրկելուն եղանակը, զանոնք իրենց ունեցածէն մերկ և թափուր կեցնելը, և անվարձ և անօթի ծառայեցնելին առաջ կը բերէ։

Նորին աղաղաւ ըսաւ, «Հեղողաց Եղբաւ՝ զօրութեանց Տէրոջը ականջներուն հասաւ»։

Այս խօսքով մեծատանց (ոմանց) այն սովորութիւնը կը պախարակէ, զի իրենց ձեռքին տակ եղողները՝ իրաւունք վարկան լով՝ կը ժողվեն բռնութեամբ իրենց անդաստանները հնձել տալու համար տաք տանն ու փոշիներուն մէջ *)....։

Եւ անոնք օրն ի բուն աշխատութեան մէջ վաստակեալ ու տուայտալ, սովալուկ ու ծարաւի, իրենց մտաց տարակուսանքէն ու սրտերնուն զայրացումէն առ Աստուած կը բողոքին։

Եւ անոնց այն սրտերնուն հնծութիւնը և մտացը մեչիւնը՝ արծուի պէս սլանալով յերկրէ յերկինս՝ կը հասնի զօրութեանց Տէրոջը ականջներուն։

Վասն զի ոչ թէ միայն սրտին հնծութեանը կը

---

*) Այս հին բարբարոս սովորութիւնը թէև հիմայ ըստ սովորելոյ քաղաքականութեան շնորհիւը վերցած է. բայց Աստուածաշունչն այս խօսքերը կենան վերաբերիչ նաև հիմակուան այն գործատէրներուն, որոնք իրենց գործատարաց շնչին օրականն ալ շատ ժամանակ առնին չեն վճարեր, որով անոնց սատակիչ նեղութեանը պատճառ կ'ըլլան։ Վասն զի կը պատուիրէ Աստուած, որ «աղքատին ու կարօտին վարձքը չգնանա, թէ քուեղբայրներդ և թէ քու երկրիդ մէջ քու քաղաքներդ գտնըվող օտարականներէն ըլլայ։ Նոյն օրը արեւը չմտած անոր վարձքը հատուցանես. քանզի անիկայ աղքատ է. և անոր յոյսը անոր վերայ է. չըլլայ որ քեզի համար Տէրոջը բողոքէ. և մեղքի տեր ըլլաս»։ (Բ. Օրէն. ԻԴ. 15։ Գ. Եր. Ի. 13)։

ըսէ Աստուած ինչպէս Մ։Լեռն (Եղէզ. ԼԲ. 11–14)։ և ոչ միայն լուռ ընթացքներուն՝ ինչպէս Աննայի (Ա. Թագ. Ա. 13), այլև երկրի վերայ թափված անմեղ արեան բողոքն ալ կը լսէ (Ծներ. Դ. 10)։

Ամենապէս՝ և հոս բողոք կ՚անուանէ սրտերուն կսկիծը՝ և մարմնոց տառապանքը։

Ինչոր համար ըսաւ «Հնչեցայ բողոքէ՝ ընթրելեանց ցերոջը ախանջիերոն հասաւ» (Ե. 4)։

. . . . . .

. . . . . .

Այս ըսելով ուզեց զարհուրեցնել մեծատունները, որ անմտութեամբ իբրեւ տկար չհամարին աղքատը և այնպէս չարչարեն. վասն զի կ՚ըսէ, անոնց վրէժխնդիրը և այցելուն՝ զօրաւոր է ամեն կերպով, և ինչոր ձեռքը բաւական է հատուցանել ձեզի չար՝ փոխանակ չարի, և զանոնք փրկելու և ապրեցնելու. (Սաղ. Թ. 9։ ԺԱ. 5։ ՂԾ. 1–8)։

«Փափկացաք, կ՚ըսէ, երկրի վերայ, ու ընթանալով ապրեցաք» (կամ. Ցակ. Ե. 5)։

Ուրիշները զրկելէն և այլոց վաստակէն ժողովեցիք, կ՚ըսէ, ձեզի այս մեծութիւնը՝ և ձեր հեշտութեան պատճառը, և աղքատին արտասուքն ու հառաչանքովը ձեզի զբօսանք պատրաստեցիք և անոր մէջ կ՚ուրախանաք։

. . . . . .

. . . . . .

«Մնա՛ք, կ'ըսէ, յեր սիրտերդ՝ որպէս ըրիք մարդիկ
վերը՝ օրո՛ւան համար»։ (Ե. 5)։

. . . . . .

. . . . . .

«Զրկեցէք, կ'ըսէ, ո՛ սպանէցէք արդարը, որ
յեղէ հակառակ ձեր կենար»։ (Կաթ. Յակ. Ե. 6)։

Հաւասիկ բոլորովին կը պարզէ խօսքը՝ որ շատ անգամ որպէս թէ առակով և օրինակով խօսեցաւ մեծատանց անիրաւութեանը վերայ։

Իւ Նոյն ինքն զրկանքները՝ զորոնք մեղք չէին համարեր իրենք, սպանումն կ'անուանէ։

Իւ արդարեւ յիրաւի. զի այն որ կ'սպանանէ զոք՝ միահաղոյն կը վերջացնէ զանի մարմնական պիտոյքներէն. իսկ այն որ մէկուն ինչքը կը յափշտակէ և կը կապէ զանի աղքատութեան մէջ՝ երկարով կապելու պէս, բիւրապատիկ մահապարտութեա՛ն է արժանաւոր և պարտական։

Վասն զի որքան որ մարմնական պիտոյքները՝ ուտելն ու ծարաւը, ցուրտն ու մերկութիւնը չարչարեն զանի, այնքան կը մեռնի անիկայ. և երանի թէ միանդամ մեռնէր, և ոչ թէ աւելի երկար տանջուէր։

Իւ մանաւանդ՝ թէ որ կին ու զաւակներ ունենայ զրկուողը, այն ատեն անձնարին աղէտք և ստուգապէս սպանումն է, ոչ թէ միայն մէկու մը այլ՝ շատերուն։

Նմին իրի ըսաւ, "Զրկի՛ր ոտ ապանեցի՛ր աչ-
քերը, որ յեղի հակառակ չէր կենար"։

Արդար կ'անուանէ աղքատն ու տնանկը, կամ
անոր համար զի արդար էին, և կամ անոր համար
զի քրիստոնեայ էին և տուրբ, (ուստի) զանոնք ար-
դար կ'անուանէ. և կամ թէ անոր համար զի չէին
մեղանչած զկրնք զրկողներուն դէմ, որք տարա-
պարտուց կը կեղեքէին նոցա կեանքը։

Անոր համար ըսաւ, "Որ յեղի հակառակ չէր
կենար"։

. . . . . .

. . . . . .

. . . . . Ապա կ'սկսի մխիթարել և
քաջալերել զանոնք որք նեղութեանց մէջ էին, անոր
համար ըսաւ։

"Երկիւղածք եղէ՛ք երանելիք, զի նոքա Տէրոջը գա-
լո՛ւստը"։ (Կաթ. Յակ. Ե. 7)։

. . . . . .

. . . . . .

"Ահա համբերող մշակը կ'սպասէ, կ'ըսէ, երկրի պաս-
ուաքան պտուղին՝ մինչև որ կանուխ կամ ուշ առնէ"։
(Անդ, Ե. 7)։

. . . . . .

"Դուք ալ երկայնմտութիւն ընէք, կ'ըսէ, և յեր-
կրպերը հաստատեցէք, զի Տէրոջը գալուստը մօտ է"։
(Անդ, Ե. 8)։

. . . . . .

. . . . . .

«Մեկնեցէք զ՝ արդարեանէ՝ եղբայրներ, որպէս զի չարաբարուքի»։ (կաթ. Յակ. Ե. 9)

Երբոր վհատեալները քաջալերեց ու սրտապնդեց, և անհամբերութիւնը անոնց վրայէն վերցուց, ապա ամենուն ընդհանրապէս օրէնք կը դնէ, թէ՛ մեծատուններուն և թէ՛ աղքատներուն, թէ՛ ծառաներուն և թէ՛ տէրերուն, ա՛յն ամենուն՝ որք մի և նոյն հաւատքին բարետոհմութիւնը ստացան իրենց անձին վերայ և մի և նոյն Հօրը որդի եղան աւազանով, ամենեւին երկպառակ չելլա՛լ իրարու հետ՝ և իրար չորտմեցնել։

Նորին աղագաւ կ՝զգուշացնէ ու կ՝ըսէ, «Մեկնեցէք զ՝ արդարեանէ՝ եղբայրներ, որ չարաբարուքի»։

Մեծատունը՝ որ ըստ Աստուծոյ եղբայր եղաւ աղքատին, պարտակա՛ն է խոնարհել անոր և մխիթարել, և ոտնհար չընել զանի, ու չմեծաբանել անոր վերայ, այլ պէտք է այս մասին նմանիլ Անոր՝ որ աղքատացաւ մեզի համար՝ որպէս զի մենք Նորա աղքատութեամբը ճոխանանք. (Բ. Կորնթ. Ը. 9)։

Նոյնպէս և աղքատը՝ որ Աստուծով մեծացաւ, թող չքամբասէ իրեն մեծատուն եղբայրը՝ թէև անիկայ չգիտնայ սիրել և աղքատայ տալը, ... այլ պէտք է իրարու հետ հաւասարիլ սիրով. ըստ այնմ ինչպէս կ՝ըսէ Առաքեալը. «Ձեր աւելին նոցա պակասութիւնը լէցնէ, որպէս զի անոնց աւելին ալ օր մը օգնո-ւիւ-ն ըլլայ ձեր պակասութեանը, որ հաւասարութիւն ըլլայ». (Բ. Կորնթ. Ը. 14).

և Քրիստոսի անդամներուն պէտք չէ բաժընվիլ ի-բարմէ և մէկզմէկ հարստահարել, և կամ խածատել և ուտել զիրար՝ և մէկզմէկ բնաջինջ ընել. (Գաղ. Ե. 15)։

Ասոր համար ըսաւ. «Մէկզմէկ մի՛ պրոմեցնէ՛ Եղբայրներ, որ չդատապարտվի՛ »։

Մ՚ենծատունը թող չտրտմեցնէ զաղքատը՝ զանիկայ զրկելովը, և աղքատն ալ թող չբամբասէ զմենծատունը՝ իբրև չար և անիրաւ ոք. վասն զի ասոնց երկուքն ալ 'ի դատապարտութիւն համարված են. ինչու որ զրկողը տարագիր է յարքայութենէն՝ իւր անիրաւութեանը համար, (նոյնպէս) և բամբասողն ալ զրկողին հետ կ՚էնայ ու կը տարագրվի՝ իւր բամբասանացը համար։

Այս է որ կ՚ըսէ սա. թէ՝ «Մէկզմէկ մի՛ պրոմեցնէ՛ Եղբայրներ, որպէս զի չդատապարտվի՛ »։

. . . . . .

. . . . . .

– 5 ІЮНЬ 1898
Арм. Благ. Общ.

ՎՐԻՊԱԿՔ

		ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
Է.Հ	ՏՈՂ.		
8	2	«Երանելիք են, կ'ըսէ, հոգւով խոնարհները»	Երանելիք են, կ'ըսէ, հոգւով խոնարհները.
41	5	Ղմանապէս, կ'ըսէ, «Եմեծապոռը	«Ղմանապէս, կ'ըսէ նա մեծապոռը . . . .
18	44	«Երեք մէյ ֆոմ	. . . «Երեք մէյ ֆոմ . . . .
48	14	(14 էրորդ պողէն էպէս մէյ պող ֆէպ պէպտ է տրէիլ.)	. . . . .
23	1	Որոնց համար կը մշակվի.	Որոնց համար որ կը մշակվի.
28	22	Տէրոջը խօսքը լսելու. և մեք	Տէրոջը խօսքը լսելու (Ամոս Ը. 11) և մեք . . . .
51	20	Զի մեզ ամենայն ինչ.	Զի մեր ամենայն ինչ.
48	1	(Լոկ) ընչաւոր.	Ընչաւոր (լոկ մարմնաւոր).

ерс 504